

## ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԴԱԴՐԵՑՈՒՑ ՀԱՅԱԴՈՒԼԸ ՍԴՐԿ ԱՏԵՆԱՊԵՏԸ ԱՅՑԵԼԵՑ ՅՈՎՀԱՆՆԻՍԱՆԻՆ



Րաֆֆի Յովհաննիսեան հացադուլը դադարեցնելու պահուն

Չորեքշաբթի Մարտի 30-ին, ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեան յայտարարեց, որ կը դադարեցնէ 15 օր տեւած իր հացադուլը:

Օր մը առաջ, Րաֆֆի Յովհաննիսեանին քննող բժիշկը մտահոգութիւն յայտնած էր անոր առողջական վիճակի առնչութեամբ: Երեքշաբթի օր հերթական գննումը կատարելէ ետք բժշկուհի Թինա Մալխասեան յորդորած էր դադարեցնել հացադուլը:

Բժշկուհին «Ազատութիւն»

ուստիոկայանի հետ գրոցցի ընթացքին ըսած էր, որ Յովհաննիսեանը ճնշման տատանումներ ունի եւ օրուայ որոշ ժամերուն ճնշումը կ'իջնէ: Բժշկուհին մտահոգուած էր նաեւ, որ Յովհաննիսեան սկսած է աւելի քիչ ջուր խմել:

Րաֆֆի Յովհաննիսեան, իր հերթին, «Ազատութիւն» ուստիոկայանին ըսած էր թէ, առայժմ պիտի շարունակէ հացադուլը, սակայն եթէ իր առողջական վիճակը լրջանայ, ինք կը վերանայի իր

Շաբ.ը էջ 4

## ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ՖՐԱՆՍԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ



Կովկասի իրավիճակին նուիրուած Խորհրդաժողովի դահլիճը

Ուրբաթ՝ Մարտի 25-ին, Ֆրանսայի Խորհրդարանի սրահներէն մէկուն մէջ կայացաւ «Խաղաղութիւնը, Անվտանգութիւնն ու Կայունութիւնը Հարաւային Կովկասի մէջ» խորհրդաժողովը, որ կազմակերպուած էր Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Ֆրանսայի շրջանի եւ Հայ-Եւրոպական Խորհուրդի կողմէ: Խորհրդաժողովին կը մասնակցէին բազմաթիւ հեղինակաւոր քաղաքական եւ հասարակական գործիչներ Ֆրանսայէն, Հայաստանէն, Միացեալ Նահանգներէն եւ Գերմանիայէն:


Իբրեւ գլխաւոր զեկուցող հանդէս եկաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամ Վահան Շիրխանեան: Ան իր ելոյթին մէջ անդրադարձաւ Հարաւային Կովկասի ռազմականացման, հայ-ատրպէյճանական եւ հայ-թուրքական յարաբերութիւններուն, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին, ֆրանսացի խորհրդարանականներու ու շաղկրութիւնը հրաւիրելով Պաք-

ուի կողմէ պարբերաբար հնչող պատերազմի մասին սպառնալիքներուն:

Վահան Շիրխանեան ընդգծեց այն ապակառուցողական եւ վտանգաւոր դիրքորոշումը, որ որդեգրած է Թուրքիան՝ Հայաստանի հետ յարաբերութիւններուն եւ Լեռնային Ղարաբաղի հարցին շուրջ: Ան նաեւ համեմատութիւններ կատարեց Հայաստանի, Ատրպէյճանի եւ Վրաստանի պետական պիւտձէներու միջեւ, նկատել տալով, որ վերջին տարիներուն Պաքուն աստիճանաբար կը մեծացնէ իր ռազմական կարողութիւնները՝ այդպիսով վտանգ ներկայացնելով Հարաւային Կովկասի անվտանգութեան եւ կայունութեան համար: Խորհրդաժողովին փակման խօսքով հանդէս եկաւ ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Սեդրակ Աճէմեանը, շնորհակալութեան խօսք ուղղելով Ֆրանսայի խորհրդարանին, Հայաստանի Հանրապետութեան դեսպան Պրն.

Շաբ.ը էջ 5

## ՃԱՓՈՆԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ



Լիբանանի մօտ Ճափոնի դեսպան Քուիշի Քուաֆամ ՀԿԲՄ-ի ատենապետ Արամ Մալխանին կը յանձնէ իր երկրի օժանդակութիւնը

Ճափոնի կառավարութիւնը մարդասիրական եւ բարեսիրական գնահատելի օժանդակութիւն մը կատարեց Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան Պէշրութի Նոր Հաճնոյ դարմանատան: Այս ծիրին մէջ, Լիբանանի մօտ Ճափոնի դեսպան Քուիշի Քուաֆամ ընդունեց ՀԿԲՄ-ի Լիբանանի Շրջանային վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւնները, ատենապետ տիար Արամ Մալխանի գլխաւորութեամբ:

Հանդիպման ընթացքին կնքուեցաւ 63,457 ամ. տոլար արժողութեամբ համաձայնագիր մը: Սոյն գումարը պիտի յատկացուի դարմանատան աշխատանքներուն ծիրին մէջ ինկող մարդասիրական ծրագիրներու իրագործման:

## ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ Է ՀԱՅԵՐՈՒ ԵՒ ՔՈՒՐԴԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԻՐ ԽՕՍՔԵՐՈՒՆ ՀԱՍԱՐ

Թուրք նշանաւոր գրող եւ Նոպէլեան մրցանակի արժանացած Օրհան Փամուք որոշած է բողոքարկել Իսթանպուլի Շիշլիի քաղաքացիական գործերով 3-րդ դատարանի այն որոշումը, որով համաձայն ինք դատապարտուած է՝ «Թուրքերը 1 միլիոն հայ եւ 30 հազար քուրդ սպաննած» են արտաչալտութեան համար:

Թրքական մամուլի փոխանցմամբ, Փամուքի փաստաբան Հալուք Ինանջ ըսած է թէ, դատարանի պարտականութիւնն է պաշտպանել խօսքի ազատութիւնը: «Օրհան Փամուքի այդ յայտարարութիւնէն անցած է 6 տարի, իսկ մամուլի մէջ նման տեսակի յայտարարութիւններու համար կը

գործէ 1 տարի վաղեմիութեան սկզբունքը: Դատը բացուելէ իվեր 5 տարի անցած է: Մենք պիտի բողոքարկենք վճիռը», - ըսած է Թուրք գրողի փաստաբանը:

Դատարանը բաւարարած է «էրգենեկոն»-ի գործով կասկածեալ իրաւաբան Քեմալ Քերիւնչսիզի եւ սպաննուած Թուրք զինուորներու 5 հարազատներու կողմէ ներկայացուած դատը: Դատարանի որոշմամբ, Օրհան Փամուքը իւրաքանչիւրին պէտք է 1000-ական թրքական լիրա փոխհատուցում վճարէ:

Օրհան Փամուք 2005-ին գուլիցերական ամսագրի մը տրուած

Շաբ.ը էջ 4

# ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ ՕԳՏԱԿԱՐ Է

## ԱՐԱՄ ԱՐԱՀԱՄԵԱՆ

Ինձ դուր է գալիս, որ Երեւան են եկել այսքան շատ պարսիկ զբօսաշրջիկներ: Ես դրական եմ համարում, որ մեր երիտասարդները հնարաւորութիւն ունեն գոնէ տեսնելու որեւէ այլազգի ներկայացուցիչներին: Ինձ ոգեւորում է այն փաստը, որ իմ մայրաքաղաքը արտասահմանցիկների համար հետաքրքրութիւն է ներկայացնում: Բայց իմ համաքաղաքացիների մի մասը, կարծես թէ, այդ կարծիքին չէ եւ մեր հիւրերին առիթով փնթփնթում է: Դա այլատեսակութիւն է. ինչ-ինչ, բայց այդ մեղքը հայերին չի կարելի վերագրել՝ դա գաւառական սահմանափակութեան

քաղաքական գործիչների եւ շարքային քաղաքացիների մեծ մասի մտքով անգամ չի կարող անցնել, որ բազմազանութիւնը կարող է իրենց ոչ թէ խանգարել, այլ օգնել, եւ հենց այդ պատճառով էլ դրսեւորում են ստանդարտ, ոչ օրիգինալ վարքագիծ: Բնականաբար, նրանք, ում ձեռքին մահակ կամ «բերդի բանալի» կայ, խփում են այլախոհների գլխին կամ նրանց տանում են բերդ՝ որ իրենց «պետականաստեղծ» գործերում ոտի տակ չընկնի: Դրանք, բնականաբար, «ագգային աւանդոյթներ» չեն՝ պարզապէս նեղ գաւառական մտածելակերպի դրսեւորում են՝ այլ (նախեւառաջ, իհարկէ, արեւմտ-

Ինձ դուր է գալիս, որ Երեւան են եկել այսքան շատ պարսիկ զբօսաշրջիկներ: Ինձ ոգեւորում է այն փաստը, որ իմ մայրաքաղաքը արտասահմանցիկների համար հետաքրքրութիւն է ներկայացնում

դրսեւորում է, երբ այն, ինչ անսովոր է քո աչքի համար, ինչ տարբերում է քո առօրեայ պատկերացումներից, ներքին ըմբոստութիւն է առաջացնում: Բայց եկէք ընդունենք, որ դա մեր այսօրուայ մշակույթի մի մասն է: Հիմա, երբ ասում են, թէ Լեւոն Տէր-Պետրոսեանը կռիւ է տալիս աթուրի համար կամ գաղտնի պայմանաւորութիւններ ունի Սերժ Սարգսեանի հետ, դա, անշուշտ, սուտ է. կամ միտումնաւոր չեք իւրանք է, կամ էլ՝ մոլորութիւն: (Վերապահում անեմ՝ եթէ խօսքը անձամբ առաջին նախագահի մասին է): Նա պայքարում է իր սկզբունքների, իր գաղափարների համար: Այլ հարց է, որ դա արեւում է Հայաստանում ձեւաւորում քաղաքական մշակույթի շրջանակներում: Համաձայն դրա՝ նա, ով քեզինք մի քիչ տարբեր է մտածում, նա կա՞մ «ներդրուած է» քո հակառակորդի կողմից, կա՞մ էլ, լաւագոյն դէպքում, խանգարում է, «ընկնում է ոտիդ տակ»: Մեր

եան) մշակույթների հետ սահմանափակ շփման պայմաններում: Հենց այս պարագայում է չափազանցում քո կամ քո խմբի կարեւորութիւնը եւ նսեմացում է մնացածների արածն ու ասածը: Նոյն տրամաբանութեամբ, երբ ոեւէ մէկի վարքը շեղում է աւանդական կանոններից, մենք այդ շեղման համար դարձեալ «սամակարգային» բացատրութիւն ենք փնտրում: Օրինակ, երբ Սերժ Սարգսեանը մօտենում է նախագահի նստավայրի մօտ ցոյց անող որդեկորոյս մայրերին, երբ գնում է սահմանում գոհուած գինուորի տուն եւ ծնողներից ներդրութիւն է խնդրում, կամ երբ Աժ նախագահը Ազատութեան հրապարակում գրոյցի է բռնում բողբոջաւոր գանդուածի հետ, մենք ասում ենք՝ «Դա շուտ է, PR է, դերասանութիւն է եւ խաբէբայութիւն»: Գուցէեւ այդպէս է: Բայց ինչո՞ւ նախկինում ՀՀ կամ Աժ որեւէ նախագահի մօտ նման շուտ անելու գաղափար չի առաջացել: «ԱՌԱՒՕՏ»

# ՅԱՂԹԱՆԱԿԻ ԿԱՐՕՏ

Մեր ժողովուրդը կարիք ունի յաղթանակների՝ երէկ ասում էր երիտասարդ մի գրող եւ պնդում, որ դա յատկապէս երեւաց Հայաստան-Ռուսաստան ֆուտբոլային խաղի ժամանակ: Մանաւանդ նոր սերունդը այդ յաղթանակին շատ էր սպասում: Երբ 90-ականներին մութ էր, գրեթէ քաղց, կարիք, անգործութիւն, մեզ պահողը հենց ռազմաճակատի յաղթանակներն էին: Ասում են՝ այդ տարիներին արտագաղթ գրեթէ չի եղել, իսկ ով էլ գնացել է՝ ետ է վերադարձել, որովհետեւ դա անյուսութեան, ապագայի հանդէպ հաւատի բացակայութեան գաղթ չէր: Ծանր էր, երիտասարդ տղաների դիակներ էին բերում Արցախից, սակայն մարդիկ ապրում էին յաղթանակների ոգեւորող, արբեցնող լուրերով: Յաղթանակներն անշուշտ միայն ռազմական չեն լինում: Եւ պէտք էլ չէ, որ 21-րդ դարում դրանք ռազմական լինեն: Այս դարը տնտեսական, գիտական, սպորտային յաղթանակների դար է: Իսկ այդ բոլոր ասպարէզներում մենք, ցաւօք, պարտուում ենք: Իսկ ժողո-

վուրդն այնպէ՞ս է ուզում յաղթել: Կարծում էք ինչո՞ւմ էր այն խաբէբայ երիտասարդ «ֆիզիկոսի» ֆենոմենը: Հենց յաղթանակի փափակ էր առաջնորդում նրանից համաշխարհային մեծութեան գիտնական, նոր էյնշտեյն ու Կոպերնիկոս սարքելու աւանտիւրան: Յաղթանակի կարօտն է ստիպում մարդկանց գնալ հանրահաւաքների ու երթերի՝ գուցէ այս անգամ իշխանութիւնը գրաւե՞նք: Եթէ այն չենք կարողանում գրաւել ընտրութիւնների ճանապարհով, ապա պէտք է դրան հասնենք ուժով ու պայքարով: Այդ նոյն յաղթանակի ձգտումով են նաեւ մարդիկ այս օրերին այցելում Բաֆֆի Յովհաննիսեանին՝ գուցէ նա իր հացադուլով յաղթի իշխանութիւններին ու ինչ-որ քայլեր պարտադրի: Յաղթելու երազանքը հօր խթան է, հասարակութեանը շարժող ուժ: Պարզապէս հարկաւոր է հասարակութեանը տալ այդ յաղթանակի գագաթումը՝ թէկուզ փոքրիկ յաղթանակներ ապահովելով:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ  
«ՀՐԱՊԱՐԱԿ»

# ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԲԱՅԱԾ ԺԱՆԱՊԱՐԸ

## ՅԱԿՈՒԲԱԴԱԼԵԱՆ

Հայ Ազգային Կոնգրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը չգնալով Բաֆֆի Յովհաննիսեանի մօտ, բացեց այնտեղ տանող ճանապարհը իշխանութեան առաջ: Մարտի 25-ին Բաֆֆի Յովհաննիսեանին է այցելել Աժ նախագահ Յովիկ Աբրահամեանը: Նոյն օրը խորհրդարանի ԲՀԿ խմբակցութեան անդամներն են այցելել Յովհաննիսեանին եւ ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկեանի անուանից դիմել նրան հացադուլը դադարեցնելու եւ խորհրդարան վերադառնալու կոչով, որ երկրի խնդիրները համատեղ քննարկեն: Նոյնիսկ Գալուստ Սահակեանը յայտարարեց, որ չգնալու մասին իր առաջնայ տեսակէտն այլեւս վերացած է, եւ ինքը եւս կարող է գնալ Բաֆֆիին տեսութեան:

Մնում է մի հարց՝ կը գնայ արդեօք Սերժ Սարգսեանը: Կարծես թէ իրադարձութիւնների ընթացքը տանում է դրան՝ իշխանութիւնը կամաց-կամաց գնում է Բաֆֆի Յովհաննիսեանին տեսութեան, նախապատրաստելով Սերժ Սարգսեանի մուտքը հրապարակ:

Տէր-Պետրոսեանի չմօտենալը, ինչը նա հետագայում բացատրեց Յովհաննէս Մանդակունու լեզուով, իշխանութեանը ստիպեց կայացնել գնալու որոշում, քանի որ ստեղծուել էր Տէր-Պետրոսեանի ֆոնին հանդուրժող, լայնախոհ եւ մարդասէր երեւալու լաւ հնարաւորութիւն: Կարծես թէ դա այն իշխանութիւնը չէ, որի ներկայացուցիչները Բաֆֆի Յովհաննիսեանի հացադուլի առաջին օրերին գրեթէ ծաղրակաւ արտայայտութիւններ էին անում նրա հասցէին:

Կարծես Յովիկ Աբրահամեանի կուսակից եւ տեղակալ Սամուէլ Նիկոնեանը չէր, որ յայտարարել էր, թէ Բաֆֆի Յովհաննիսեանը հաճելին համատեղում է օգտակարի հետ: Կարծես Յովիկ Աբրահամեանի կուսակից, Գալուստ Սահակեանի «այլախոհական» անցեալի գինակից Վազգէն Կարախանեանը չէր, որ կատակել էր, թէ ուտելիք է ուղարկել Բաֆֆի Յովհաննիսեանին: Կարծես թէ երիտասարդ հանրապետականները չէին, որ յայտարարել էին, թէ Բաֆֆի Յովհաննիսեանը PR է անում:

Ու ոնց որ թէ այդ գործիչներից ոեւէ մէկը որեւէ նկատողութիւն չի ստացել իր կուսակցական կամ խորհրդարանական բոսերից՝ Սերժ Սարգսեանից, Յովիկ Աբրահամեանից, Գալուստ Սահակեանից: Ու երբ այդ բոսերն այսօր հերթ են կանգնում Բաֆֆի Յովհաննիսեանին հանդիպելու համար, մեղմ ասած դժուար է լինում նրանց մարդասիրութեան եւ հոգատարութեան մղումներին հաւատալը: Այ, օրինակ եթէ Յովիկ Աբրահամեանը Բաֆֆի Յովհաննիսեանին այցելելուց առաջ հանդէս գար ասենք Սամուէլ Նիկոնեանի նկատողութեամբ, ապա Բաֆֆին այցելելու անկեղծութեանը հնարաւոր կը լինէր հաւատալ:

Իսկ հիմա մնում է ընդամէնը մտածել, որ այդ մարդիկ պարզապէս PR են անում, ինչի համար իրենց կուսակիցները մեղադրում էին հենց Բաֆֆի Յովհաննիսեանին: Նրանք նախ փորձեցին Յովհաննիսեանին օգտագործել Տէր-Պետրոսեանին հարուածելու համար, գեներացնելով այն աղմուկը, որ բարձրացաւ այն բանից յետոյ,

երբ Կոնգրէսի առաջնորդը հրաժարուեց մօտենալ Բաֆֆի Յովհաննիսեանին: Հիմա էլ Բաֆֆի Յովհաննիսեանին փորձ է արւում օգտագործել արդէն սեփական իմիջը բարձրացնելու համար:

Մինչդեռ երբ օրինակ աղմուկ էր բարձրանում հացադուլաւորին անհրաժեշտ վրան տեղադրելու համար, թէ Աժ նախագահը, թէ իշխանութեան որեւէ այլ բարձրաստիճան պաշտօնեայ չփորձեց որեւէ քաղաքական դիրքորոշում արտայայտել այդ կապակցութեամբ:

Հայաստանի իշխանութեան ներկայացուցիչներին թւում է, թէ հասարակութիւնը չի շեղու, տրամաբանելու յատկութիւն չունի եւ կեանքը հատուածներով է պատկերացնում, այդ հատուածները չի կարողանում կապել իրար: Սխալում են: Հասարակութիւնը չի շեղում է, տրամաբանում է, իշխանութեան գործունէութիւնը դիտում ոչ թէ հատուածների բաժանած, այլ ամբողջութեան մէջ, որովհետեւ քաղաքական պատասխանատուութիւնը հատուածական կամ հատուածային չի լինում: Իշխանութիւնը կամ կրում է քաղաքական պատասխանատուութիւն ամէն ինչի, ամէն մի չինովնիկի արարքի համար, կամ չի կրում ոչ մի պատասխանատուութիւն ընդհանրապէս:

Բաֆֆի Յովհաննիսեանի գործն է իհարկէ ընդունել իրեն այցելողներին այնպէս, ինչպէս կը կամենայ: Բայց թերեւս կարելի է ասել, որ այդ այցերը տուեալ պարագայում չեն արժանանում հանրային ընդունելութեան, որովհետեւ այդ այցերը հակասութեան մէջ են մտնում նոյն այդ իշխանութեան միւս գործողութիւնների հետ: Իսկ հասարակութիւնը կարողանում է չիչել ու տրամաբանել:

«ԼՐԱԳԻՐ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ԳԱՐԻԷԼ ՄՈՒՈՅԵԱՆ  
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
 ԿԱՐԶԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)  
 Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid at Pasadena CA.  
 Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆ

ԼԱՐԻՍԱ ԱԼԱԻԵՐԴԵԱՆ.-

«ՀՆԱՐԱԿՈՐ ՉԷ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆԸ ՅԱՂԹԵԼ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՄԵԿ ՇԱՐԱՍԻԻՆՈՎ»

Ազգային ժողովի «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Լարիսա Ալաւերդեանը Tert.am-ի հետ գրոյցում կարծիք յայտնեց, թէ ընդդիմադիր մէկ շարասիւնով հնարաւոր չէ յաղթել իշխանութեանը՝ չնայած, որ իշխանութեանը, ըստ նրա, ձեռնտու է մէկ շարասիւնը: «Իշխանութիւնն աւելի շահագրգռուած է բոլորին տեսնել մէկ շարասեան մէջ, ընդ որում՝ մէկ անձի կողմից ղեկավարուող, որովհետեւ անկախ անձից՝ մէկ շարասեան դէմ պայքարելն աւելի դիւրին է իշխանութեան համար, իսկ բազմազանութեան հետ շատ դժուար է», - ասաց Ալաւերդեանը: Պատգամաւորի համոզմամբ՝ դա է պատճառը, որ իշխանութիւնը ոգեւորութեամբ է ցուցաբերում, որ բոլոր ընդդիմադիր ուժերը մէկ ընդդիմադիր դաշինք կազմեն:



Պատգամաւոր Լարիսա Ալաւերդեան

Հարցին, թէ հնարաւոր է, որ պատգամաւորի մատնանշած երկրորդ ընդդիմադիր շարասիւնը ձեւաւորուի «Ժառանգութեան» շուրջը, Ալաւերդեանը պատասխանեց, թէ իր կարծիքով՝ «Ժառանգութիւնը» կարող է նպաստել, որ ձեւաւորուի նոր ֆորմատով նոր ընդդիմութիւն:


«Այն կարող է ընդգրկել նաեւ նրանց, ովքեր չեն ուզում կամ սովոր չեն մի լիդերի ենթակայութեան ներքոյ յայտնուել: Գիտէք, շատ երկրներին՝ այդ թւում՝ զարգացած երկրներին փորձը ցոյց է տալիս, որ արդէն միալիդերութիւնը կարծես զիջում է իր տեղը համանախագահների, համադեկավարներով ղեկավարուող ձեւերին: Դա կարծես մեր դուռն էլ ծեծում», - ասաց պատգամաւորը:

Ընդդիմադիր երկրորդ շարասեան ձեւաւորումը, Ալաւերդեանի դիտարկմամբ, չպէտք է որբւնէ կուսակցութիւն ընկալի որպէս իր դէմ ձեւաւորուող կառույց:

«Անգամ ընդդիմադիր կեցուածքի մէջ մեր հասարակութիւնը վաղուց արդէն մասնատուած է: Այն, որ ՀԱԿ-ի շուրջ հաւաքուել են հասարակական եւ քաղաքական որոշ ուժեր, եւ ՀԱԿ-ը երեք տարի շարունակ բարձր ալիքի վրայ է պահում բողոքը, ես դա համարում եմ բաւականին մեծ աշխատանք: Բայց արդէն իսկ փորձը ցոյց է տալիս, որ բոլորը չէ, որ այդտեղ միաւորուած են: Այսինքն ընդդիմադիր եւ բողոքող զանգուածը աւելի մեծ է, երեք-չորս անգամ աւելի մեծ է, քան նրանք, որոնք կողմնորոշուել են դէպի ՀԱԿ-ը», - նշեց «Ժառանգութեան» պատգամաւորը: Ըստ նրա՝ քաղաքական առումով հնարաւոր է ստեղծել եւս մէկ խմբաւորում, որը ոչ թէ ընդդիմութեան, այլ իշխանութեան դէմ կ'աշխատի:

«Ընդդիմադիր ուժերի մէջ մենք ոչ թէ հակադրութիւն ենք ակնկալում, այլ առողջ մրցակցութիւն, որ որեւէ մի ազդեցիկ խումբ դուրս չմնայ ընդդիմադիր միաւորումներից: Սա իմ անձնական կարծիքն է, եւ այս հարցը չի քննարկուել ոչ կուսակցութիւնում, ոչ վարչութիւնում», - ասաց պատգամաւորը:

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏԸ» ՏԱՐԱՆՁԱՏԻՈՒՄ Է ԹԵ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԻՑ, ԹԵ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԻՑ



Վերջին ամիսներին արաբական մի շարք երկրներում տեղի ունեցող ժողովրդական ընդվզումները եւ իշխանափոխութիւնների գործընթացները, աշխարհում, եւ ի մասնաւորի մեր տարածաշրջանում ռազմա-քաղաքական եւ ֆինանսա-տնտեսական որոշակի լծակներ ունեցող պետութիւններին պարտադրեցին մտաեցումների վերանայման: Այդ փոփոխութիւնները իրենց դրոշմը թողեցին նաեւ Հայաստանի Հանրապետութեան եւ իշխանութիւնների եւ քաղաքական ընդդիմութեան գործունէութեան մէջ եւ մարտավարական քայլերում: Այդ մասին ասուած է «Սարդարապատ» շարժման տարածած յայտարարութեան մէջ:

Շարժումն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետութիւնը ստեղծուած նոր իրավիճակում դարձել է շատ աւելի կառավարելի եւ վերահսկելի օտարների կողմից: «Ուստի երկրի եւ ազգի ապագան գործնականում օտարների ձեռքը տնօրինման յանձնելու գործընթակող կործանարար է եւ յղի Հայոց պետականութեան կորստով: Օտարների բարեհաճութիւնը մուրացող որեւէ քաղաքական ուժի եւ ղեկավարի կեցուածքը, որը

յնուամենայն է սեփական անլիարժէքութեան բարդոյթի վրայ, արժանի է միայն հայ ժողովրդի եւ Հայաստանի քաղաքացիների արհամարհանքին», - նշել են յայտարարութեան հեղինակները եւ յաւելել. «2012թ. եւ 2013թ. Հայաստանի Հանրապետութիւնում համապետական ընտրութիւններին այսօրուանից պատրաստուող թէ իշխանութիւնը եւ թէ ընդդիմութիւնը հաւասարապէս կրում են պատասխանատուութիւն ժողովրդին հերթական անգամ խաբելու, ընտրութիւնները կեղծելու եւ իշխանութիւնը ժողովրդից խլելու ու մենաշնորհելու մէջ»:

«Սարդարապատ» շարժման նախաձեռնող խումբը մէկ անգամ եւս վերահաստատել է, որ կազմաւորուող վերկուսակցական, համազգային եւ դիմադրական «Սարդարապատ» շարժումը չի մասնակցելու որեւէ համապետական ընտրութեան, քանի դեռ ժողովրդի կամքի պարտադրմամբ չի տապալուել իշխող ռեժիմը: Վերահաստատում ենք նաեւ, որ «Սարդարապատ» շարժումը չի հանդիսանում եւ չի հանդիսանալու որեւէ քաղաքական միաւորման մաս», - ասուած է յայտարարութեան մէջ:

ՀՀԿ.- «19 ՏԱՐՈՒԱՅ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻ՛ ԲԵՐԷՔ 3 ՏԱՐՈՒԱՅ ՆԱԽԱԳԱՅԻ ՎՐԱՅ ԲԱՐԴԵՄ»

Սերժ Սարգսեանի նախընտրական ծրագրի դրոյթները դանդաղ, սակայն կեանքի են կոչուած, իսկ Հայաստանը նրա պաշտօնավարման երեք տարիների ընթացքում մեծ հեղինակութիւն է ձեռք բերել միջազգային ասպարէզում: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ Մարտի 28-ին յայտարարեց Ազգային ժողովի ՀՀԿ խմբակցութեան պատգամաւոր Կարինէ Աճեմեանը՝ յաւելելով, որ այդ առաջընթացը որոշ մարդիկ միտումնաւոր անտեսում են:

Հարցին, թէ այսօր հանրապետութիւնում տիրող սոցիալ-տնտեսական վատ վիճակի հետեւանքով դատարկուող գիւղերը նոյնպէ՞ս մտնում էին Սերժ Սարգսեանի նախընտրական ծրագրում, Աճեմեանն արձագանքեց. «Ոչ, նման բան չի մտնում նախագահի նախընտրական ծրագրում: Ես ընդունում եմ, որ մենք առաջ ենք գնում դանդաղ քայլերով: Բայց 19 տարուայ խնդիրները մի բերէք 3 տարուայ նախագահի վրայ բարդեմ», - ասաց Աճեմեանը:

Անահիտ Բախչեանն էլ նկատեց, թէ «Ժառանգութեան» առաջնորդ Ռաֆֆի Յովհաննիսեանն էլ է յայտարարել, որ մինչեւ երկիրը դուրս չկայ երեք նախագահների եռանկիւնուց, երկրում առաջըն-

թաց տեղի չի ունենայ: Ապա յաւելեց, որ ժամանակին ՀՀԿ-ն Քոչարեանին աստուածացնում էր, յայտարարելով, «Թէ էս տեսակ նախագահ ենք ունեցել»: «Սերժ Սարգսեանին էլ դուք էք աստուածացնում», - նկատեց Աճեմեանը:

«Ես», - ասաց Կարինէ Աճեմեանը՝ հակադարձեց Բախչեանը: «Այո: Բաֆֆի Յովհաննիսեանը ինքն էր յայտարարում, որ կամ Աստուած ինձ կ'օգնի, կամ երկրի նախագահը: Ինքը երկրի նախագահին եւ Աստուծուն դրեց նոյն հարթութեան վրայ», - յայտարարեց ՀՀԿ-ական պատգամաւորը:

«Ո՛չ, Յովհաննիսեանը նկատի ունի, որ երկրի նախագահը իր կատարած քայլերով, իր բարձրացրած խնդիրները լուծելով կ'օգնի դուրս գալ հացադուլից», - Աճեմեանին հակադարձեց ընդդիմադիր պատգամաւորը:

Ի դէպ, երբ ասուլիսն աւարտուեց, Կարինէ Աճեմեանը այսպէս ասած՝ գոռով սեղմեց Անահիտ Բախչեանի ձեռքը: Բախչեանն էլ անկեղծացաւ, թէ երբեք այդ որակի ասուլիսի չէր մասնակցել: «Էս ինչի՞ էինք այսքան բարձր խօսում, կոկորդա ցաւում է», - նկատեց Բախչեանը: Կարինէ Աճեմեանը ժպիտով արձագանքեց, քանի որ, ըստ ամենայնի, նրա կողմը չէր ցաւում:

«ԱՐՄԱԿԻԱՅԻ» ՄԻ ՇԱՐՔ ՉՈՒԵՐԹԵՐ ՅԵՏԱԶԳՈՒԵԼ ԵՒ ՉԵՂԵԱԼ ԵՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԵԼ

Հայաստանի ազգային աւիափոխադրող «Արմաւիա» ընկերութիւնը կրկին անյարմարութիւններ է պատճառել ուղեւորներին: Մի շարք ուղղութիւններով ընկերութեան չուերթեր Մարտ 29-ին յետաձգուել են, իսկ որոշ ուղղութիւններով՝ չեղեալ յայտարարուել:



Մասնաւորապէս՝ Երեւան-Չրոմ չուերթը, որի հաշուառումը պէտք է սկսուէր առաւօտեան ժամը 8-ին, յետաձգուել է: Յետաձգուել է նաեւ Երեւան-Ռոստով չուերթը:

Ընկերութիւնը չեղեալ է յայտարարել Երեւան-Միւնխէն-Երեւան եւ Չրոմ-Երեւան չուերթերը: «Արմաւիան» յետաձգել է Երեւան-Թեհրան եւ Երեւան-Դելի չուերթերը: «Զուարթնոց» միջազգային օդանավայանի կոնցեսիոններ «Արմենիա միջազգային օդանավայաններ» ընկերութեան մամուլի քարտուղար Գէորգ Աբրահամեանը Tert.am-ին ասաց, որ «Արմաւիայի» չուերթերի յետաձգումը որեւէ կապ չունի «Զուարթնոց» օդանավայանի հետ: «Երկու ընկերութիւնների միջեւ որեւէ խնդիր չկայ», - ասաց Աբրահամեանը:

Վերջերս «Զուարթնոց» օդանավայանում յետաձգուել էր «Արմաւիայի» չուերթը՝ օդանա-

լակայանի առջեւ աւիափոխադրողի կուտակած պարտքի պատճառով: Երկու ընկերութիւնների միջեւ խնդիրը հարթուել է փոխըմբռնման յուշագրի ստորագրմամբ: «Արմաւիա» ընկերութեան մամուլի քարտուղար Նանա Աւետիսովան ստեղծուած իրավիճակը բացատրեց օդանավերի անբաւարար քանակով: Մեկնաբանելով չուերթների յետաձգման պատճառները՝ Tert.am-ին նա ասաց, որ ընկերութեան ինքնաթիռներից մէկը գտնուում է Սէյլեյեան կղզիներում եւ կը վերադառնայ 7 օրից, երկու ինքնաթիռներ էլ տեխնիկական են, իսկ մէկ ինքնաթիռ՝ անսարքութեան պատճառով կանգնած է: «Վաղը ինքնաթիռներից մէկը կը վերադառնայ տեխնիկականից, եւ արդէն որեւէ յետաձգումներ չեն լինի», - ասաց Աւետիսովան:

# ԼՈՒՐԵՐ

## ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՒ ԲԱՔԻՈՒՄ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ ԵՆ ՂԱՄԱՆԱԽԱԳԱՐՆԵՐԻ ԶԵԿՈՅՑԸ

Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին քաղաքական գերատեսչությունները երկուշաբթի, Մարտ 28-ին մեկնաբանել են ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների՝ Լեռնային Ղարաբաղին յարակից շրջաններում իրականացուած դաշտային գնահատման առաքելութեան գեկոյցը:

«Զեկոյցը ներկայացնում է համանախագահների տեսակետը տեղում իրավիճակի վերաբերեալ, որն ինչպէս եւ նախորդ գեկոյցի դէպքում, եւս մէկ անգամ հերքում է ադրբեջանական քարոզչութեան կողմից տարածուող ապատեղեկատուութիւնը», - յայտարարել է Հայաստանի արտգործնախարարութեան իսանակ Տիգրան Բալսանը:

Ըստ նրա՝ «Հայաստանը կիսում է համանախագահների տեսակէտն առ այն, որ միայն խաղաղ, բանակցային կարգաւորումը կարող է ապահովել ապագայի աւելի յստակ հեռանկարներ տարածաշրջանի համար»:

ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների գեկոյցին աւելի վաղ արձագանքել էր Ադրբեջանի արտգործնախարարութիւնը, մասնաւորապէս յայտարարելով. - «Ադրբեջանը ողջունում է Մինսկի խմբի համանախագահների ուղերձը, որ կոչ է անում հրաժարուել

իւրաքանչիւր գործունէութիւնից, որը կը բերի Հայաստանի կողմից օկուպացուած տարածքների ժողովրդագրական, սոցիալական, ինչպէս նաեւ մշակութային նկարագրի փոփոխութեան կամ անհնարին կը դարձնի ստատուս քվոյի փոփոխութիւնն ու խաղաղ լուծմանը հանգեւր»:

Ադրբեջանի արտգործնախարարութիւնը պնդում է, թէ դիտորդների ներկայացրած գեկոյցի տածաձայն՝ կրթական, առողջապահական եւ աղմինխատրատիւ մի շարք շինութիւններ են կառուցուել հայկական սփիւռքի տրամադրած ֆինանսական օգնութեամբ:

Մինչդեռ Մինսկի խմբի համանախագահների հրապարակած գեկոյցի ամփոփագրում նշուած է հետեւեալը. - «Համանախագահները գնահատել են, որ այս տարածքներում բնակչութեան նշանակալի աճ տեղի է ունեցել 2005 թուականից ի վեր: Բնակիչները մեծ մասամբ հայեր են, ովքեր այնտեղ են տեղափոխուել Ադրբեջանից: Նրանք ապրում են ծանր պայմաններում, չզարգացած են թակառուցուածքներով, ցածր տնտեսական ակտիւթիւն են ցուցաբերում եւ հանրային ծառայութիւններից օգտուելու սահմանափակ հնարաւորութիւն ունեն»:

## «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԱՐՏՕՆԵԱԼ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԻ»

Արդէն մի քանի շաբաթ է, ինչ Սիրիայում շարունակուած են հակա-կառավարական յուզումները, որոնք ծայր առան սկզբից հարաւային Դարաս քաղաքում, այնուհետեւ տարածուեցին միջերկրածովեան Լաթաքիա: Միջազգային լրատուամիջոցների փոխանցմամբ, յուզումներ են եղել անգամ մայրաքաղաք Դամասկոսում, որոնք, սակայն, ճնշուել են ոստիկանների կողմից:



Սուրիոյ նախագահ Ասադ Հայ Մարմնամարզական միութեան՝ ՀՄՄ-ի բանակավայրը կատարած այցելութեան ժամանակ

Սիրիայում կայ մեծաթիւ հայկական համայնք, որն հիմնականում կենտրոնացուած է Հալէպ եւ Դամասկոս քաղաքներում: Հայերին են պատկանում մեծ քանակութեամբ խանութներ, գործարաններ: Հալէպի հայկական թաղամասերը՝ Նոր Գիւղն ու Սուլեյմանիան, համարում են Հալէպի ամենաբանուկ թաղամասերը, կան բազմաթիւ եկեղեցիներ եւ դպրոցներ, գործում են մարզական եւ մշակութային միութիւններ:

Այս վերջին յուզումները բաւական անհանգստացրել են նաեւ տեղի հայկական համայնքի ներկայացուցիչներին: Սիրիահայ մի գործարար, ով չցանկացաւ ներկայանալ, HayNews.am-ի հետ զրոյցում նշեց.

«Այո՛, Ասադների Սիրիան բաւական խիստ երկիր է, այնտեղ քաղաքական ազատութիւնների հետ խնդիրներ կան: Սակայն հայկական համայնքը միշտ էլ գտնուել է արտօնեալ վիճակում: Մեզ հնարաւորութիւններ է տրուել սեփական ակումբներն ու միութիւններն ունենալ, կան հզօր հայկական

դպրոցներ, որտեղ երեխաներն իսկական հայ են մեծանում, հնարաւորութիւն կայ սեփական ազգի պատմութիւնն ուսուցանել: Միայն մեր սկաւտական շարժումներն ուղղակի անգին են, սեփական բանակավայրեր ունենք: Ո՞ր մի համայնքն այդքան արտօնութիւն ունի՝ ոչ մի»:

Նա յաւելեց, թէ իրենք ցանկանում են, որպէսզի գործող համակարգը պահպանուի, որովհետեւ վախենում են, թէ գլուխ կը բարձրացնեն իսլամիստները.

«Նախագահ Ասադը ալաուիների ցեղից է, որոնք բաւական չափաւոր մուսուլմաններ են: Իսկ եթէ չանկարծ երկրում իշխանութեան գան սուսնիններն ու շիաները, (էլ չեմ ասում քուրդերի կամ թուրքմենների մասին), մշտապէս կ'ունենանք միջկրօնական եւ ազգամիջեան բախումներով երկիր: Այսօր մեր կանայք եւ աղջիկները կարողանում են առանց փաթթոցների (ի նկատի ունի մուսուլմանական գլխաշորեր) դուրս գալ փողոց: Վաղը, եթէ ինչ-որ բան փոխուի, վստահ չեմ, որ ամէն ինչ նոյն ձեւի կը լինի»:

## ԹՈՒՐՔ ԿՈՒՍԱԿՑԱՊԵՏԸ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑ ԵՆ ԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՍԱՍԻՆ ԳԻՐՔ ԳՐՈՂԻ ԴԵՍ

Թուրքիայի ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» կուսակցութեան առաջնորդ Քեմալ Քըլըչդարողլուն 100 հազար լիրայի չափով փոխհատուցման հայց է ներկայացրել եւ պահանջել, որ դատարանը գրախանութներից հաւաքել տա «Դերսիմցի հայուհի Եմուշի որդի ինժեներ Քեմալը» գրքի օրինակները:

Թուրքական Zaman-ի փոխանցմամբ՝ Քեմալ Քըլըչդարողլուն նշել է, թէ գրքում իր նկատմամբ վիրաւորական արտայայտութիւններ, կան, որի համար դիմել է դատական ատեաններին:

Յիշեալ գործով արդէն դատախազութիւնում ցուցմունքներ է տուել գրքի հեղինակ Սուլէյման Եշլիւրթը՝ նշելով, թէ ինքը չի վիրաւորել Քըլըչդարողլունին:

Նշենք, որ չիշեալ գրքի վերաբերեալ իրենց քննադատական յայտարարութիւններ են արել նաեւ քրդական «Խաղաղութիւն եւ ժողովրդավարութիւն» կուսակցութեան պատգամաւոր Հասիփ Քափլանն ու Շերաֆեթթին Հալիսը:

Շերաֆեթթին Հալիսը նշել էր, թէ այդ գիրքը պատուիրուած է, որն իր էութեամբ ստորացուցիչ եւ անբարոյական մօտեցում է: «Ես պարոն Քըլըչդարողլունի փաստաբանը չեմ, սակայն այդ գիրքը վիրաւորանքներով լեցուն է թէ՛ Քըլըչդարողլունի, թէ՛ հայերի տեսանկիւնից:

Յատկանշական է, որ գրքի տպագրման ամսաթիւը Փետրուարի 20-ն է, սակայն այն անկարագրելի արագութեամբ յաջորդ օրը յայտնուեց Թուրքիայի խորհրդարանում: Մէկ փաստ եւս, գիրքը տպագրուել է Անկարայի համար ռեկորդային համարուող 100 հազար տպաքանակով:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՐՑ ԱՆՀԱՆԳՍԱՑԱԾ ԵՄԵՃԱՄՕՐԻ ԱՏՈՄԱԿԱՆՆԻ ՎԻՃԱԿՈՎ

Վրաստանի նախկին նախագահ Էդուարդ Շեւարդնաձէն կոչ է արել իր երկրի իշխանութիւններին անմիջապէս բանակցութիւններ սկսել Հայաստանի իշխանութիւնների հետ՝ Մեծամորի ատոմակայանի անվտանգութեան հետ կապուած: Հայաստանի ատոմակայանի վիճակի մասին հաղորդագորութիւնները «խորը անհանգստութեան» տեղիք են տալիս, յայտարարել է նախկին նախագահը «Ասուած-Դասավալի» շաբաթաթերթին տուած հարցազրոյցում:

«Ինչպէս պարզուել է, հայկական ատոմակայանը ամենաողջալի վիճակում է եւ այնտեղ անվտանգութեան ոչ մի երաշխիք չկայ, եւ դա սպառնում է ամբողջ տարածաշրջանին», - ասել է նա:

Շեւարդնաձէն կարծում է, որ նման պայմաններում Վրաստանի իշխանութիւնները «ուղղակի պարտաւոր են» բանակցութիւններ սկսել Հայաստանի հետ եւ ամէն ինչ անել «սպասուող ողբերգութիւնից» խուսափելու համար:

## ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԴԱԴՐԵՑՈՒՅ ՀԱՅԱԴՈՒԸ

Շարունակուած էջ 1-էն որոշումը:

Երեքշաբթի, Մարտ 29, Յովհաննիսեանին այցելեց նաեւ Ս.Դ. Հնչակյան Կուսակցութեան կեդրոնական վարչութեան ատենապետ ընկ. Սեդրակ Աճէմեանը եւ Կուսակցութեան սփիւռքի ու Հայաստանի կառուցներուն անուսով գորակցութիւն յայտնեց Յովհաննէսեանին՝ իր ներկայացուցած բոլոր պահանջներուն կապակցութեամբ:

Ընկ. Աճէմեան յորդորեց Բաֆֆի Յովհաննիսեանին որ դադարեցնէ հացադուլը ու իր պահանջները հետապնդէ Խորհրդարանէն ներս:

Բաֆֆի Յովհաննիսեանին այցելած էր նաեւ Հայաստանի մօտ

Միացեալ Նահանգներու դեսպան Մարի Եովանովիչ:

Դեսպանին հետ առանձնազրոյցի ընթացքին անդրադարձ եղած է Յովհաննիսեանի առողջական վիճակին, Հայաստանի մէջ մարդու իրաւունքներու խնդիրներուն, երկրի ներկայ օրհասական իրավիճակին եւ ներքաղաքական կացութեան:

Բաֆֆի Յովհաննիսեան Մարի Եովանովիչին ըսած է, որ Հայաստան պէտք է արմատական լուծումներ տայ երկրէն ներս կուտակուած խնդիրներուն:

Բաֆֆի Յովհաննիսեանին այցելած են նաեւ Ազգային ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեանը, Հայաստանի ոստիկանապետը, առողջապահութեան եւ արդարա-

## ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ

Շարունակուած էջ 1-էն

հարցազրոյցի մը մէջ ըսած էր թէ, թուրքերը 1915-ին 1 միլիոն հայ եւ 30 հազար քուրդ սպանած են: «Թուրքիոյ մէջ այդ մասին ոչ ոք չի համարձակիր ըսել, բայց ես կ'ըսեմ», - յայտարարած էր Օրհան Փամուքը:

Այդ խօսքերէն ետք սկսած էր Փամուքի հետապնդումը, Թուրքիոյ քրէական օրէնսգիրքի տիրահաւազակ 301-րդ յօդուածի հիման վրայ: Օրհան Փամուք ամիս մը առաջ յունական թերթի մը մէջ կրկին ըսած էր իր այդ խօսքերը, յայտնելով, թէ ինքը ետ չի կանգնիր իր ըսածներէն:

դատութեան նախարարները, Ազգային ժողովի ընդդիմադիր եւ իշխանական պատգամաւորներ: Յատկապէս այս այցելութիւններուն կապակցութեամբ Բաֆֆի Յովհաննիսեան ըսած է թէ, տա-

կաւին ոչ մէկ բան չկայ փոխուած իշխանական գիտակցութեան մէջ: Տարբեր պաշտօնեաներու այցելութիւնները Յովհաննիսեան նկատած է որպէս քաղաքավարական այցելութիւններ:

### ՖՐԱՆՍԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ



Հնչակեան Կուսակցութեան կազմակերպած Խորհրդաժողովի մասնակիցները

#### Շարունակուած էջ 1-էն

Վիզէն Զիթէչեանին եւ Իսէ Լէ Մոլիւնոյի քաղաքապետ եւ Խորհրդարանի անդամ Պրն. Անտրէ Սանտինիին՝ այս կարեւոր խորհրդաժողովի կայացման նպատակով իրենց ցուցաբերած աջակցութեան համար:

Իր խօսքին մէջ Ընկ. Աճէմեան մասնաւորաբար ըսաւ, «Կայունութիւն եւ անվտանգութիւն կարելի է ապահովել միայն այն պարագային, երբ դրացի երկրներու միջեւ կայ համագործակցութիւն եւ վստահութիւն: Սակայն 1992-ի սկսեալ Թուրքիա, որ այսօր կը ձգտի մտնել Եւրոպական Միութիւն, փակ կը պահէ Հայաստանի հետ սահմանը ու կը փորձէ Հայաստանը պահել շրջափակման մէջ՝ այդպիսով մնայուն վտանգներ կայացնելով տարածաշրջանի համար: Պաշտօնական Անգարան, դառնալով կողմ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան մէջ, կը շարունակէ իր հակահայ քաղաքականութիւնը»:

Շարունակելով իր խօսքը Ընկ. Աճէմեան ըսաւ, «Թուրքիա կը կը շարունակէ ժխտել անցեալ դարու մեծագոյն ոճիրը՝ Հայոց Յեղապանութիւնը, որուն զոհ գացին

մէկ եւ կէս միլիոն մեր հայրենակիցները: Այժմ ես գլուխ կը խոնարհիմ Ֆրանսայի ժողովուրդի առջեւ, որ այդ սարսափելի օրերուն ընդունեց տարագիր հայ ժողովուրդին, կարելիութիւն տուաւ անոնց վերագտնել նոր Հայրենիք»:

«Ինչ կը վերաբերի Ատրպէյճանին, ապա այդ երկիրը անցած դարու 90-ական թուականներէն ռազմական յարձակում սկսաւ իր սեփական հողին վրայ, միջազգային իրաւունքի բոլոր տարրերուն համապատասխան ինքնորոշուած Լեւոնային Ղարաբաղի ժողովուրդի դէմ, եւ ինքն ալ պարտուեցաւ իր սանձազերծած պատերազմի ընթացքին: Այժմ եւս, երբ Ղարաբաղի մէջ մեծցած է նոր՝ անկախ սերունդ, Ատրպէյճան մնայուն կերպով կը սպառնայ պատերազմով, որ սկսելու պարագային անկանխատեսելի հետեւանքներ կը բերէ ոչ միայն իր՝ այլեւ ողջ տարածաշրջանի համար», վերջաւորութեան ըսաւ ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Սեդրակ Աճէմեան:

Աւելցնենք, որ խորհրդաժողովը լուսաբանելու եկած էին ոչ միայն տեղի հայկական, այլեւ ֆրանսական լրատուամիջոցները:

### ՄԴՀԿ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆՐԸ ՓԱՐԻԶՈՒՄ



Հանդիպում Ֆրանսայի մօտ ՀՀ դեսպան Վիզէն Զիթէչեանի հետ. ճախելու աջ Սեդրակ Աճէմեան, դեսպան Զիթէչեան եւ Վահան Շիրիխան

Շարունակուած են Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչների հանդիպումները Փարիզում: Մարտի 24-ին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ ընկ. Սեդրակ Աճէմեանը, Կեդրոնական վարչութեան անդամ ընկ. Վահան Շիրիխանեանը, Ֆրանսիայի շրջանի կուսակցութեան պատասխանատուները հանդիպումներ են անցկացրել Հայ Առաքելական եկեղեցու Ֆրանսա-իայի թեմի առաջնորդ Նորվան արքեպիսկոպոս Զաքարեանի, Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Վիզէն Զիթէչեանի, ինչպէս նաեւ Արցախի Հանրապետութեան ներկայացուցիչ Յովհաննէս Գեէորգեանի հետ:

ՄԴՀԿ պատուիրակութիւնը սրբազանի հետ քննարկել է եկեղեցու դերը Սփիւռքում, հայապահպանման ծրագրերը, ինչպէս նաեւ Հայաստանում եւ Սփիւռքում աղանդաւորութեան դէմ պայքարի հնարաւոր միջոցները:

Հայաստանի դեսպան Վիզէն Զիթէչեանի հետ հանդիպման ժամանակ Հնչակեան ղեկավարութեան կողմից առաջարկ է հնչել Համա-

հայկական խորհուրդ ձեւաւորելու մասին, որը պէտք է համակարգի Հայրենիքի եւ Սփիւռքի կապերը, մշակի համագործակցութեան աւելի լայն ձեւաչափեր: ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան ներկայացուցչութիւնը նկատել է, որ Համահայկական Խորհուրդը պէտք է ղեկավարի Հայաստանի Հանրապետութեան նախագահը, նրան մաս պէտք է կազմի Արցախի Հանրապետութեան նախագահը, Սփիւռքում գործող աւանդական կուսակցութիւնները, գաղթօճախների ներկայացուցիչները, յայտնի հայեր:

Արցախի Հանրապետութեան ներկայացուցիչ Յովհաննէս Գեէորգեանի հետ գրոյցի ժամանակ ընդգծուել է, որ վերջին տարիներին ուժեղացել են Արցախի ներկայացուցչութիւն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան տեղի կառուցի միջեւ կապերը, որն էլ աւելի է նպաստում Ֆրանսիայում, ինչպէս նաեւ Եւրոպայում Արցախի իրաւունքները բարձրացնելու, ինչպէս նաեւ հակահայ քարոզարշաւի դէմ համակարգուած աշխատելու գործին:

Հնչակեան ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԼՈՅ ԴԻՒԱՆ

### ՀՐԱՆԴ ԴԻՆՔԸ՝ WIKILEAKS-Ի ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

Թուրքական «Թարաֆ» օրաթերթը շարունակում է հրապարակել Թուրքիայի վերաբերեալ՝ WikiLeaks-ում տեղ գտած փաստաթղթերը:

2007թ. Յունուարի 30-ին թուագրուած փաստաթղթում Ստամբուլում Միացեալ Նահանգների այն ժամանակուայ գլխաւոր հիւպատոս Դեբորա Կ. Ջոնսը Պետքարտուղարութեանն ուղարկած հեռագրում մանրամասներ է ներկայացնում «Ակօս» շաբաթաթերթի սպանուած խմբագրապետ Հրանդ Դինքի եւ ԱՄՆ ներկայացուցիչների միջեւ 2006թ. Նոյեմբերի 14-ին Ստամբուլում տեղի ունեցած հանդիպման մանրամասները:

«Իրաւապաշտպան Հրանդ Դինքի ողբերգական մահը Թուրքիայի համար մեծ կորուստ էր: Դեսպանութեան եւ հիւպատոսութեան աշխատակիցները յաճախ էին հանդիպում Դինքի հետ: Նմանատիպ հանդիպումներից վերջինը եղաւ 2006թ. Նոյեմբերի 14-ին, որի ժամանակ Դինքը հանդիպել էր ԱՄՆ-ի Աշխարհում կրօնի ազա-

տութեան հարցերով յանձնաժողովի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում Դինքն արել է շատ հետաքրքիր արտաստուութիւն՝ նշելով, որ պատմական բացասական յուշերի աղբիւրը աւելի շատ ազգայնականութիւնն է, քան կրօնը», - վաշինգտոն ուղարկուած հեռագրում գրել է Դեբորա Ջոնսը՝ ներկայացնելով Հրանդ Դինքի կողմից հանդիպման ընթացքում արուած որոշ յայտարարութիւններ:

«Ես որոշ չափով դէմ եմ, որ ազգային փոքրամասնութիւններին դիտեն որպէս կրօնական փոքրամասնութիւններ: Հայերն այս հոդերում ապրել են 4 հազար տարի: Սակայն, ցաւալի է, որ հիմա դարձել են կրօնական համայնք: Դա անընդունելի է: Թուրքիան թուրք հանրութիւնը, որը մեծամասնութիւն է կազմում, չի դիտում որպէս կրօնական համայնք: Սակայն փոքրամասնութիւններին ընկալում է որպէս կրօնական համայնքներ: Սա խնդիրներ է առաջ բերելու:

Հանրապետութեան հռչակու-

մից իր վեր, հակառակ այն բանի, որ ըստ Լոզանի համաձայնագրի եւ Սահմանադրութեան՝ պէտք է քաղաքացիները հաւասարապէս պաշտպանութեան տակ վերցուեն, Թուրքիան ազգային փոքրամասնութիւններին երբեք չի դիտել որպէս իր քաղաքացիներ: 60 հազար հայեր շարունակում են ապրել որպէս երկրորդ դասի քաղաքացիներ: Պետութիւնը հայերին մօտենում էր որպէս անվտանգութեան սպառնալիքի: Սակայն այսօր նրանց թիւն այնքան քիչ է, որ այլեւս սպառնալիք չեն համարում: Թուրքիան, ստեղծուած իրավիճակը փորձում է օգտագործել իր շահերի համար: Այսօր անգամ համայնքը գուրկ է իրաւունքները», - դեսպանի ներկայացմամբ՝ ասել է Դինքը:

«Մեծ տարբերութիւն կայ այսօրուայ Թուրքիայի եւ 30 տարի առաջուայ Թուրքիայի միջեւ: 30 տարի առաջ էրբաքանի (նախկին վարչապետ) ժամանակաշրջանում քրիստոնեան թշնամի էր, իսկ Արեւմուտքի ժողովուրդները՝ գիւրջուր: Սակայն այսօր կայ մի կուսակցութիւն, որի հիմքում ընկած է իսլամը: Վերջինս ամրապնդում է մեր կապերը Արեւմուտքի հետ: Դրա հետ մեկտեղ կան

ծայրայեղականներ, որոնք, սակայն, քիչ դերակատարութիւն ունեն», - ասել է Դինքը:

Երբ հանդիպման ընթացքում Դինքին հարցրել են, թէ ո՞ր կուսակցութիւնն է Թուրքիայում ներկայացնում «Իրական աշխարհիկութիւնը», Հրանդը պատասխանել է՝ էրդողանի գլխաւորած «Արդարութիւն եւ զարգացում» իշխող կուսակցութիւնը:

Հարցին, թէ «Որպէս կրօնական փոքրամասնութեան ներկայացուցիչ չէ՞ք վախենում, որ Թուրքիայում կը սկսի հզօրանալ իսլամական ուղղութեամբ իսլամական կուսակցութիւնը», Դինքը պատասխանել է՝ «Ոչ, չեմ վախենում»:

Իսկ ի պատասխան այն հարցին, թէ «Ինչո՞վ էք վստահ, որ քեմալիզմից հրաժարուելու արդիւնքում Թուրքիայում չեն հաստատուել շարիաթի կարգեր», Դինքը յայտարարել է. «Դրա արդիւնքում կը հաստատուեն ոչ թէ շարիաթի կարգեր, այլ՝ ժողովրդավարութիւն: Իսկ քեմալականները ժողովրդավար չեն: Քեմալական պետութիւնն ինձ դատապարտեց այն բանի համար, որ ես ասել եմ՝ հայ եմ»:

### ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆԸ ՅԱՆԳԵՑՆՈՒՄ Է ԶԱՐԱՇԱՅՄԱՆ

#### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՆԱՍԵԱՆ

Ինքնասպանությունները դարձնեն են յաճախակի:

Պաշտոնական վիճակագրության համաձայն, մեզ մօտ գործազուրկ են մինչև 250,000 քաղաքացի: Ոչ պաշտոնական տուեալներով, իրականում գործազուրկ է կէս միլիոն մարդ: Աշխատելը իւրաքանչիւր մարդու կենսական կարեւոր պահանջմունքներից է: Ահա թէ ինչու աշխատում են նոյնիսկ այն մարդիկ, որոնք ունեն անհաշուելի հարստություն: Աշխատանքը կամ աշխատելու հնարաւորությունը կորցնելը մարդու համար ծանր ստրես է, իսկ աշխատելու հնարաւորութիւնից տեւականօրէն զրկուած, այսինքն՝ գործազուրկ վիճակը մարդու համար հաւասարագոր է տեւական խրոնիկական ստրեսային վիճակում գտնուելուն: Աշխատանք չունենալու պատճառով տեւականօրէն նիւթական ծանր վիճակում գտնուելը եւս համարժէք է խրոնիկական ստրեսային վիճակի: Եւ եթէ սրան գումարենք անբաւարար նիւթական պայմանների պատճառով ընտանիքում յաճախակի ծագող անախորժութիւններն ու վէճերը, ապա պատկերն աւելի կ'ամբողջանայ:

Յայտնի է, որ 1 մարդու մնդի համար ամսական նուազագոյն գամբիւղն արժէ մօտաւորապէս 41000 դրամ, իսկ նուազագոյն աշխատավարձը՝ 32,500 դրամ է: Խրոնիկական թերանումը եւ հիպովիտամինոզը առաջացնում են օրգանիզմի ընդհանուր դիմադրողականութեան նուազում, ինչը յանգեցնում է հոգեբանական, ֆիզիքական, վարակային վնասակար գործոնների նկատմամբ օրգանիզմի ընկալունակութեան բարձրացման: Դա է պատճառը, որ այսօր տազնապալի չափերի են հասել «սոցիալական» համարուող այնպիսի հիւանդութիւնները, ինչպիսիք են ուռուցքային, տուբերկուլոզային, սրտանօթային եւ մարսողական համակարգերի, հոգեկան ոլորտի հիւանդութիւնները, թմրամոլութիւնը:

Հոգեկան հիւանդութիւնների պարագայում դիտուում է ոչ միայն քանակական աւելացում, այլեւ որակական ծանրացում: Բժշկութեան մէջ վճարովի սկզբունքի ներմուծումը (նաեւ համավճարի ձեւով) եւ բնակչութեան համատարած աղքատացումը մեծ մասի համար բուժումը դարձրին անհնար: Մի կողմից ահագնանում է հիւանդների քանակը, միւս կողմից նուազում են պոլիկլինիկաներ ու հիւանդանոցներ դիմողների թիւը: Հերթերը գոյանում են միայն թաղման բիւրոներում:

Պոն Հոփքինսի համալսարանի սոցիալական առողջապահութեան

### ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՌՈՒՄԱՄԵՏ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀՆԳԵԱԿՈՒՄ Է

#### ԳԵՆՐԳ ՍՍԱՄԲՈԼՑԵԱՆ

Ամերիկացի սոցիոլոգները, ամփոփելով 2010 թուականին աշխարհի մօտ 100 պետություններում անցկացուած հարցումների արդիւնքները, ամբողջական մի ցանկ են հրատարակել, որից պարզ է դառնում, թէ տարբեր երկրներում ինչպէս են վերաբերում համաշխարհային քաղաքականութեան առաջատարներին:

Մեր երկրում անցկացուած հետազոտութեան արդիւնքների համաձայն, հայաստանցիների 75 տոկոսը դրական է գնահատում Ռուսաստանի ղեկավարութեան որդեգրած քաղաքականութիւնը՝ այն բնութագրելով որպէս արդիւնաւէտ: Այս մտքին ընդդիմացող մեր հայրենակիցների թիւը աննշան է՝ ընդամէնը 7 տոկոս:

Ի դէպ, հարեւան Ատրպէյճանում Ռուսաստանի քաղաքականութիւնը դրական ընկալողների թիւը եւս քիչ է՝ մօտ 54 տոկոս:

Ընդհանուր առմամբ, ուռսամէտութեան ցուցանիշներով Հայաստանը գիջում է միայն Տաճիկստանին, Ուզբեկստանին, Ղրղզստանին եւ Արեւմտեան Աֆրիկայում գտնուող Մալի պետութեանը:

Ինչպէսեւ կարելի էր ակնկալել, մեր միւս հարեւան պետութիւնում՝ Վրաստանում, վերաբերմունքը Ռուսաստանի հանդէպ խիստ բացասական է: Հարցուած վրացիների 76 տոկոսը խստօրէն դատապարտում է պաշտոնական Մոսկուայի քաղաքական ուղեգիծը եւ միայն 6 տոկոսն է, որ արդիւնաւէտ է գնահատում այն քայլերը, որ իրականացնում են Դմիտրի Մեդվեդեւն ու Վլադիմիր Փութինը:

Աշխարհի պետություններից Ռուսաստանի նկատմամբ վստահութեան նման ցածր մակարդակ առկայ է նաեւ Քոսովոյում, որտեղ ուռսամէտ տրամադրութիւններ ունեցող քաղաքացիների թիւը չի գերազանցում 7 տոկոսը:

Ի դէպ, միւս պետութիւնը, որի ղեկավարութեան քաղաքականութիւնն արժանանում է Հայաստանի բնակիչների ջերմ աջակցութեանը, Ֆրանսան է: Հայաստանցիների 62 տոկոսը դրական եւ միայն 12 տոկոսն է բացասական գնահատում Մարքոզիի վարչակազմի գործունէութիւնը: Վրաստանում Ֆրանսային դրական են վերաբերում հարցուածների 43, Ատրպէյճանում՝ 42, իսկ Թուրքիայում՝ ընդամէնը 22 տոկոսը:

Միացեալ Նահանգների հանդէպ հայաստանցիների վերաբերմունքը եւս բաւական դրական է: 2010-ին անցկացուած հարցումների համաձայն, հայաստանցիների 50 տոկոսը դրական է գնահատում ԱՄՆ-ի ղեկավարութեան գործունէութիւնը, իսկ 32 տոկոսը՝ բացասական: Նշեմ, որ նախորդ երկու տարիներին Ուաշինգթոնի նկատմամբ վստահութեան ցուցանիշը Հայաստանում աւելի բարձր էր՝ 54 տոկոս: Ատրպէյճանում Միացեալ Նահանգների ներկայ վարչակազմի քաղաքականութեանը հաւանութիւն է արժանացրել հարցուածների 58, իսկ Վրաստանում՝ ընդամէնը 47 տոկոսի շրջանում:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի բնակիչները, ըստ Gallup-ի հրատարակած տուեալների, վստահ են ընկալում նաեւ Գերմանիայի

Շարք էջ 18

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շարաքաթերթին**  
**T: (626) 797-7680**  
**F: (626) 797-6863**  
**massis2@earthlink.net**

Ազգային Երգերու Երեկոյ  
 Կազմակերպութեամբ՝  
**ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ**  
 Նուիրուած՝  
 Ա.Ս.Ս.Կ.Կ.  
**Կայծ Երիտասարդական Միութեան**  
**100 ԱՄԵԱԿ-ին**  
 Երեկոն պիտի խանդավառէ Լոնտոնէն սիրուած Երգիչ՝  
**ՍԱՄՈՒԷԼ ՎԱՐԴԱՆԵԱՆ**  
 Տեղի կ'ունենայ Շաբաթ՝ Ապրիլ 9, 2011 երեկոյեան  
 ժամը 8:30-էն սկսեալ Հ.Մ.Մ.-ի Կարօ Սողանալեան  
 սրահէն ներս, հասցէ՝ 1060 N Allen Ave. Pasadena  
 1887  
 Տոմսերու համար հեռաձայնել  
**(323) 592-9880**  
 Մուտքի նուէր \$35.00



### ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ ԱՊՐԻԼ 3-ԻՆ



Մեր պատմութեան հեռաւոր թէ մօտիկ անցալի, նաեւ մեր օրերու հերոսամարտերը փաստացի վկայութիւն են, որ հայ ժողովուրդը, ծանրակշիւ մարտահրաւէրներու եւ մահացու հարուածներու դիմաց, թուրամորթ կրակորակներու չէ ցուցաբերած, այլ դիմած է արդար ինքնապաշտպանութեան: Վարդանանց հերոսամարտէն մինչեւ մեր Զարթօնքի շրջանը, ֆետայական շարժումը, Ա. Աշխարհամարտի օրերուն ու անկէ ետք, Սարգստապատի մէջ ու այլուր, տակաւին երէկ՝ Արցախի մէջ, հայը զարնուելու կողքին նաեւ զարկած է, «Քու սուրդ, մեր պարանոցը» պատմական խօսքին տուած է լիարժէք խորք, այն առումով, որ մեր պարանոցին ձեռք տուողը նաեւ կը ստանայ համարժէք պատասխան:

Մեր հերոսամարտերը տարուէ տարի ոգեկոչումի ու յիշատակումի կ'ենթարկենք՝ նա'եւ մենք մեզի յիշեցնելու, որ մեր սիրտերուն ու հաւաքական կամքին մէջ ամուր կը պահենք ինքնապաշտպանութեան, հայ մնալու եւ մեր հայրենիքով գոյատեւելու յանձնարարութիւնը:

Հայկական հերոսամարտերուն ոգեկոչման գլխաւոր դրօշակիրներն են հայրենակցական միութիւնները, որոնք տարուան ընթացքին յատուկ օրեր ունին իրենց հայրերուն ու պապերուն սիրա-

գործութիւնները վերապրելու:

Այնթապցիներու Մշակութային Միութիւնը կը կանգնի այդ միաւորներու շարքին, եւ ամէն Ապրիլի սկիզբին, կ'ոգեկոչէ Այնթապի հերոսամարտն ու զայն մարմնաւորողներուն յիշատակը:

Յառաջիկայ Ապրիլ 3ին, Կիրակի չեմիջօրէին, այնթապցիներ եւ այլ հայրենակիցներ դարձեալ ժամադրուած են իբրեւ ուխտապահներ: Հերոսամարտի յուշահանդէսը տեղի պիտի ունենայ Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ սրահին մէջ, Կլենտօն: Միութիւնը լիովին պիտի արժեւորէ մշակութային միաւոր մը ըլլալու իր հանգամանքը. յայտազիրը կազմուած է ինամբով:

Վերապատուելի Պարգեւ Տարագճեան պիտի բանախօսէ հերոսամարտը կերտող անձնաւորութիւններու մասին, որոնց անձամբ հանդիպելու եւ ծանօթանալու բախտը ունեցած է: Յայտազիրին վրայ է երկու գիրքերու ներկայացում. առաջինը՝ միութեան նախագահ եւ պատուակալ ատենապետ Երուանդ Պապայեանի նորագոյն հատորն է. «Միւրուած դէմքեր, գիրքեր, իրագործումներ եւ այլն», երկրորդը՝ հանգուցեալ Տոթթ. Յարութիւն Նազարեանի յուշերը՝ «Եղեռնէն վերապրողի յուշեր»: Յայտազիրը պիտի ունենայ նաեւ գեղարուեստական բաժին (երաժշտական): Ուրեմն, ժամադրուած ենք Ապրիլ 3ին:

**ՀԱՄԱՏԵՂ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՐՆԻ 91ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ**

Հայոց Մեծ Եղեռնի 91րդ տարելիցին առթիւ, Երկուշաբթի, Ապրիլ 25ին «Յիշատակ Մեռելոց»ի օրը, Առաջնորդանիստ Սրբոց Ղեկնողեանց Մայր Տաճարին մէջ տեղի պիտի ունենայ Սուրբ եւ անմահ պատարագ: Առաւօտեան ժամը 10:00ին ժամերգութիւն, ժամը 11:00ին՝ Սուրբ Պատարագ:

Սուրբ Պատարագը պիտի մատուցանէ Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Արարողութեան պիտի մասնակցին նաեւ Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու հոգեւորականները:

Օրուան հոգեւոր պատգամը պիտի փոխանցէ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Արարողութեան աւարտին Հոգեհանգստեան Մանաւոր Պաշտօն պիտի կատարուի մեր բիւրաւոր նահատակներու հոգիներուն համար:

Հաւատացեալներ սիրով կը հրաւիրուին Մայր Տաճար՝ միասնաբար աղօթելու եւ ոգեկոչելու մեր Ապրիլեան Եղեռնի նահատակներուն յիշատակը:


Աղօթենք, որ Աստուած իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ մեր անմեղ զոհերուն հոգիները, անասան պահէ Հայց. Առաքելական Եկեղեցին եւ Մայր Հայրենիքը եւ Սուրբ Հոգին միութարէ համայն Հայ ժողովուրդը:

**ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ**

### ՇԱՐԼ ԱԶՆԱԻՈՒՐ ՊԻՏԻ ՄԵԾԱՐՈՒԻ ՆԻԻ ԵՈՐՔԻ ՄԵՋ

ՖԼՕՐԷՆՍԱԻԱԳԵԱՆ Թարգ. Գ. Մ.

Յառաջիկայ Մայիսի 20ին, 2011 Ֆրանսահայ անուանի երգիչ Շարլ Ազնաւուր, Նիւ Եորքի մէջ պիտի մեծարուի պաշտօնական հանդիսութեան մը ընթացքին: Այս արտակարգ միջոցառումի հովանաւորն է Հայ Օգնութեան Հիմնադրամը, որ թէ իր հիմնադրութեան եւ թէ Հայաստանի անկախութեան 20 ամեակի գոյգ առիթներով կազմակերպած է Շարլ Ազնաւուրը պատուելու սոյն միջոցառումը: Հանդիսութեան ներկայ պիտի գտնուին աշխարհահռչակ անուանի երգիչներ, երգահաններ, արուեստագէտներ, ինչպէս նաեւ բարերարներ: Օրուան մեծարեալը՝ Շարլ Ազնաւուր ներկայ պիտի գտնուի որպէս Զուիցերիոյ մօտ Հայաստանի դեսպան եւ Ժընեւի ՄԱԿ-ի գրասենեակի Հայաստանի մշտական ներկայացուցիչ: Ներկայ պիտի ըլլայ նմանապէս Հայաստանի մօտ Ֆրանսայի արտակարգ լիազօր դեսպանը:



եալ վանաձորի Հայաստանի Տարեցներու Տանը: Նշենք նաեւ որ վանաձորի տունը անձնական նախաձեռնութիւնն է Ազնաւուրի եւ այս նպատակին համար ան հիմնած է Հայ Օգնութեան Հիմնադրամը (ֆոնտ):

Արամ Հայկազը լաւ է ճանաչում ամենօրեայ հոգսերով ապրող իր ամերիկաբնակ հերոսներին, որոնց ներկայացնող պատմուածքներն ամփոփում է «Մենք ու մեր դրացիները» («Մեր դրացիները») խորագրի տակ: Նա Նիւ Եորքից «հագիւ վեց եօթը մղոն հեռու» գտնուող գիւղն անուանում է «Մեր գիւղը», բայց դա ո՛չ Համաստեղի Գիւղն է, ո՛չ էլ Մնձուրու Արմտանը: Սա արդէն աշխարհի չորս ծագերից այս հողում ծուարած ալլալեզու մարդկանց բնակավայրն է՝ գիւղ բոլորի համար, բոլորի գիւղը, այդ թւում՝ նաեւ հայերի: Ամերիկայում ապրում են տարբեր ազգերի ներկայացուցիչներ, եւ հայրենաբաղձութիւնը սոսկ «հայկական հիւանդութիւն» է: Ճիշտ է, հայի ցաւն անօրինակ է, բայց իւրանդացին կամ իտալացին էլ նոյնքան կապուած են իրենց հայրենիքին, տառապում են կարօտից: Արամ Հայկազը դիպուկ է բնութագրել աշխարհը գրքերից մէկի վերնագրով՝ «Պանդոկ»: Պանդոկ, ուր ելումուտ ունեն բոլոր մարդիկ՝ իրենց առօրեայ կենցաղային հոգսերով ու ազգային նկարագիրը պահելու յուսահատ ճիգերով: Գրողն այդ ամէնին նայում է կեանքի եւ մահուան խորհուրդը հասկացած հայի աչքերով, որի համար աշխարհի ամենահեքիաթային հաճոյքն էլ է թունաւորուած ոչ միայն անցեալում կրած անլուր տառապանքով, այլեւ մարդու եւ մարդկութեան անյոյս հեռանկարով:

Դառնութեան արմատները սնում են ոչ միայն անցեալի արիւնքով էջերից, այլեւ այն գիւղակցութիւնից, որ «Մարդը հաւատքն ալ տարբեր որակներ ունեցող ապրանքի պէս է» 7, իսկ մարդկութիւնը շարունակում է ապրել՝

կատարուած ոճի իննհարող մնալով, կատարուածից իր համար հետեւութիւններ անելու փորձ անգամ չկատարելով, ուրեմն քար լուրթեամբ հաստատելով ոճի իր եւ ոճրագործութեան մի նոր հնարաւորութիւն աշխարհի ինչոր անկիւնում՝ ինչ անուն էլ այն կրի: Հայկազի հերոսը մտածում է, որ աշխարհը «Հայութեան Յուզան դարձաւ», - չի ուզում մահից յետոյ թաղուել այն հողում, որն Աւետարանից յայտնի «Բրուտի արտ» անունով կարելի է կոչել: Աշխարհից եւ մարդուց ներքին դժգոհութիւնը, նրանց լաւ ու բարի տեսնելու ցանկութիւնը հային միաւորում են աշխարհին եւ մարդկութեանը, բայց արեան կանչը, երակներում տրոփող ցաւն անամոք է: Ապրել է պէտք, եւ հայն ապրում է երկրային ուրախութիւններով, բայց հոգու խորքում անթեղուած կրակի պէս ծխում է Կարօտը: Պարտէզի անկիւնում ծլարձակած տասնչորս հասկերը հայի աչքերի առաջ դառնում են «արեւուն տակ ծփացող ոսկի արտեր», եւ նա «մտքի աչքերով կը տեսնէր» «անոնց մէջ մտած գերանդի շարժող թուխ մարդեր»: 8 Արամ Հայկազի գրականութեանը բնորոշ բարեհոգի հումորի մթնոլորտում առանձնանում են այն պատկերները, որոնց հերոսներն ամերիկաբնակ հայերի առաջին սերնդի մարդիկ են. նրանք ոչինչ չեն մոռացել, չեն կարող մոռանալ, որովհետեւ չեն ուզում, որ Չարդը, աւարաւորութիւնը կրկնուեն ուրիշ մի երկրում էլ ... Յաւելենք՝ այդ մարդիկ իւրատեսակ սխրանք գործեցին՝ օտար երկրում ապահովելով նիւթական ու բարոյական այն հարստութիւնը, որով այսօր ապրում է Ամերիկայի հայութիւնը՝ հաւասարի իրաւունքով կանգնելով աշխարհի միւս ժողովուրդների ներկայացուցիչների կողքին:

Արամ Հայկազն ուղղակի հարց է տալիս՝ «Թուրքը ստեղծելու համար չէ՞ս ամէնար Աստուած...»: 9 Հայ մարդուն արարումից, որը հողի տեսքով ներկայացնում է երկնքի պաշտամունքը, բաժանում է նաեւ քաղաքակրթութիւնը: Արամ Հայկազը «Կարօտ» ժողովածուի «Դամբանական՝ ծղրիղի մը համար» պատմուածքում քաղաքակրթութիւնը բնորոշում է այսպէս. «Մենք քաղաքակրթութեամբ ենք, իրար կը սպանենք, բայց իրար չենք ուտեր»: Տեղին է լինել, որ 1914 թ. գրած «Ապաշաւանք» յօդուածում Յովհաննէս Թումանեանը, դիմելով թուրք Չարդարարներին, քաղաքակրթ աշխարհից հայ ժողովրդի դառն հիասթափութեան մասին գրում է. «Մեր սրտերում Ռայմսի տաճարից շատ աւելի մեծ մի տաճար կար, որի մէջ նա՝ քաղաքակրթ մարդը, ապրում էր ձեզանից առանձին, նրանք խորտակեցին էն հոյակապ տաճարը, եւ մնացին դուրսը, իրենց ձեռքով արած աւերակների մէջ, ձեզ հետ միասին, ձեզ հետ հաւասար»: 10 Արամ Հայկազը «Հաշտու՛ւիմ Աստուծոյ հետ» պատմուածքում գրում է. «Թուրքը Արարչագործութեան մեծագոյն սխալն է ու ամօթը... Շնչաւորներուն ամենէն վայրագն ու ստորինը»: 11 Ի դէպ, Արամ Հայկազը նաեւ մեր ազգային անբացատրելի մեծահոգութեամբ, անվերապահ վստահութեամբ ու միամտութեամբ է բացատրում ցե-

ղասպանութեան ծրագրի իրականացումը. բաւական չէ, որ դարեր շարունակ հարկադրաբար ապրելով թուրքի կողքին՝ չճանաչեցինք նրա գիշատիչ հոլութիւնը, աւելին՝ կարծես հաշտուեցինք այն փաստի հետ, որ թրքական պետութիւնը պարբերաբար արտօնում էր հայութեան թալանը, որպէսզի կերակրեր աւարաւոր տեսակին: 1915-ի Ապրիլին էլ հայութեանը թուաց, թէ հերթական մի քանիօրեայ թալանն է լինելու, այնինչ այս անգամ հայութեան ոչնչացման պլաններ էին մշակել ու ի լուր աշխարհի յայտարարեցին, թէ հայութեան արմատը չորացրել են: Վէրքի մրմուռի նման ցաւոտ է այն զգացումը, որ ունենում եւ Միւսլիմ դարձած Արամի, նրա մի քանի հայ ընկերների մասին պատմող այն տողերը, երբ գարմանքով իմանում են, թէ իրենք կոտորածից փրկուած միակ հայերը չեն: Արամ Հայկազի գրականութեան մէջ կայ ցաւի կենդանի զգացողութիւնն ու Հայրենիք ունեցող հայի հրճուանքը: Սա նրա գրականութեան ինքնատիպութեան հիմքերից է, պատգամը հայութեան սերունդներին՝ որտեղ էլ նրանք ապրեն:

Արամ Հայկազին նուիրուած գրական-գեղարուեստական երեկոյթի առիթով հետաքրքիր նամակ է գրել Համաստեղը: 12 Նա բարձր է գնահատում գրչեղբոր ջանքերը՝ «Ամերիկայի երկաթի նման ծանր պայմաններում մէջ» «հացի պարտադիր աշխատանքին» գեղեցիկ գրականութիւն համատեղելու հարցում եւ նրա օրինակով գրականութիւնը բնորոշում է որպէս անկեղծութիւն:

Անդրադառնալով սփիւռքահայ գրականութեան ապագայի հարցին՝ Համաստեղը կրկին ընդգծում է Հայաստանի հետ «ազատ եւ ուժեղ կապեր» հաստատելու հրամայականը, քանի որ «գալիք հայ գրողը չպիտի կրնայ պահել մեր ազգային նկարագիրը»: Արամ Հայկազը այդ նկարագիրը պահող եզակիներից է. «այժմ քիչեր են այդ ճամբու ճամբորդները»,... ցաւով արձանագրում է Համաստեղը:

Հայ ժողովրդի մէջ «թաքնուած հօր ուժը» յատկապէս բուռն դրսեւորուեց Մեծ Եղեռնի յիսնամեակի օրերին, երբ «լաւագոյն եւ ուժեղ կամուրջ» (Համաստեղի բնորոշումներն են ... Մ. Ս.) ստեղծուեց Սփիւռքի ու Հայաստանի միջեւ: 1969 թ. նախան Արամ Հայկազը Հայաստանում էր: Հայրենիքում ապրած առաջին օրերին նրան չէր լքում թուրքի հետ սահման ունենալու տագնապը, բայց հայ մարդկանց վստահ, հանգիստ կեցուածքը հանգստացրեց նրան: Նա տեսաւ, թէ ինչ իսանդավառութեամբ էր նշում Յովհաննէս Թումանեանի ծննդեան 100-ամեակը: Հայրենիքից (միշտ մեծատառով էր գրում) գրած նամակներում եւ յօդուածներում պատմում է, թէ արտասուել է Եղեռնի գոհերի յուշարձանի մօտ՝ նայելով Երեւան քաղաքի համայնապատկերին: Դժգոհում էր, թէ լացկան է դարձել, ու միաժամանակ ուրախանում, որ Հայրենիքում յուզուելու, հրճուելու, նաեւ արտասուելու առիթները շատ կան: Հայրենիքում տեսաւ նաեւ թերութիւններ ու թերացումներ, բայց համոզուած պնդեց, որ խորհրդա-

### ՍԱԴԵՂ ՅԵՂԱՅԱԹԻ «ՔՈՒ ԲՈՒ» ՎԻՊԱԿԸ

#### ԱՐԱՄՊԱԶԵԱՆ

Մինչև հիմա էլ իրանցիները Սադեղ Հեղաշարժ անունը շոտակով են հնչեցնում, չնայած շոտակի մէջ ակնյայտորէն զգացում է թաքնուած ու խորը մի ակնածանք մինչև հիմա երկրում չընդունուած գրողի հանդէպ: 2005-ին թեհրանում անցկացուած գրքի 18-րդ միջազգային փառատօնի ընթացքում արգելուեց «Քոու բու» վիպակի ցուցադրումը:

Արգենտինացի գրող, գրականութեան տեսաբան Ալբերտո Մանգուելն իր կազմած համաշխարհային գրականութեան պատմութեան մէջ լաւագոյն ստեղծագործութիւնների ցանկում գետեղել է Սադեղ Հեղաշարժի «Քոու բու» վիպակը, որն առայսօր մնում է չվերծանուած եւ գուցէ ամբողջապէս չհասկացուած մի ստեղծագործութիւն:

20-րդ դարի իրանցի, իմ կարծիքով՝ ամենամեծ արձակագիրն ապրեց ընդամենը 48 տարի՝ ինքնակամ հրաժարուելով կեանքից: Նա ծնուել է արիստոկրատ ընտանիքում, սովորել Դարուլ-Ֆունուն յայտնի համալսարանում: Որպէս լաւագոյն ուսանող՝ հնարաւորութիւն է ստացել մեկնելու Ֆրանսա, որտեղ ծանօթացել եւ ընկերութիւն է արել ժան Պոլ Սարտրի հետ՝ մինչև իր կեանքի վերջը: Հեղաշարժը խորապէս ծանօթ էր եւրոպական գրականութեանն ու փրիլիտփայլութեանը, ինչպէս նաեւ արեւելեան մշակոյթին, մասնաւորապէս հնդկական աստուածաբանութեանը: «Քոու բու» վիպակն առաջին անգամ լոյս է տեսել Բոմբէյ քաղաքում, յետագայում՝ Ֆրանսայում եւ եւրոպական այլ երկրներում:

Վիպակն ընթերցելիս սթափութեան մթնոլորտը գնալով դառնում է վիզուալ մի խաբէկանք, եւ իրականութիւնը լիովին դեֆորմացւում է՝ մղձաւանջի տարածք ներս մտնելու պահից սկսած: Պատմողն անկեղծօրէն կիսում է իր պատմութեամբ, բայց միայն ինքն իր մէջ. «Կարեւոր չէ՝ ուրիշները



կը հաւատան, թէ ոչ, միայն վախենում եմ վաղը մեռնեմ՝ ինքս ինձ դեռ չճանաչած»: «Ես գրում եմ միայն լապտերի լոյսից պատին ընկած իմ ստուերի համար»: Առաջին հայեացքից պարզ թուացող ինքնաճանաչման փնտռութեան բովանդակութիւնը շոտով վերածուած է սեփական ներաշխարհով՝ սիրած աղջկայ մարմնի, նրա արեան ու մսի միջով մահը, վախը եւ երեւակայութիւնը, դաւաճանութիւնը ճանաչելու անգոր փորձերի: Բայց իրականում ոչինչ էլ չի բացայայտուում, ոչինչ ոչ մի կերպ թոյլ չի տալիս նրան ինքնաճանաչուելու:

Միմփոլներով լեցուն, ափիոնահատ ճանապարհն արդէն անկառավարելի է դառնում: Պատումը օղակ առ օղակ մտնում է մղձաւանջից ու մահից անդին անորսալի մի տարածութեան մէջ, որ պաշտպանուած է անճանաչելիութեան գրահով: «Երկու լուսամուտներն ինձ կապում են արտաքին աշխարհի ու ստահակների կեանքի հետ: Սենեակիս պատին հայելի է ամրացուած, որի մէջ տեսնում եմ դէմքս: Իմ սահմանափակ կեանքում հայելին աւելի մեծ տեղ է գրաւում, քան ինձ հետ առնչութիւն չունեցող տականքների աշխարհը»: «Իսկ ներքին աշխարհից ինձ մնացել էր դայեակուս ու լիրբ կինս...»:

Արտաքին ու ներքին աշխարհ չունեցող մարդուն մնացել է միայն ամենաթողութեան պատրանքը: Մահն ու վախն այս պարագայում արտացոլում են իրենց մաքուր ֆորմաներով՝ առանց սեթեթեթանքների՝ տեսական սեւեռումների շարժողականութեամբ:

### ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

#### ԱՐՄԻՆԷ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Գեղարուեստական հրապարակախօսութեան արժէքները 20-րդ դարի վերջին երեսուն տարիներին հայ իրականութեան մէջ անփոխարինելի էին: Գրական ամսագրերում տեղ էին գտնում նոր գաղափարների որոնումով, բանավէճերով հարուստ հրապարակախօսական նիւթեր:

Հրապարակախօսութիւնն իրօք պահպանում էր հանրային կարծիքի ու գիտակցութեան վրայ ազդեցութիւնը, հասարակական կեանքի քննադատութեան արգելուածութեան պայմաններում հակադրուածութիւնը դրականի, կատարելի սուր ընդգծմամբ: Սխեմատիզմից խուսափելու համար աւելի ու աւելի տեղ էր յատկացւում մարդուն յուզող խնդիրներին, մարդու ճակատագրին ու հոգեբանութեանը: Պատմւմ ուղեկցում էր հեղինակի անսքող միտումով, պատմւմ ձեւաւորող առանցքային գնահատականով:

Խորհրդային հրապարակախօսութեանն առանձնապէս յատուկ էին բարոյական կատարելատիպը ներկայացնող ժանրերը: Վարդգէս Պետրոսեանը, հրաժարուելով կարծրատիպերից, փորձում էր «քննարկման դնել» բարոյական արժէքները, որին հակառակ Զօրի Բալայեանը հրապարակախօսական երկի համար նախընտրել է փաստերը: Լաւագոյն վկան վերջերս լոյս տեսած «Յաղթելով մահին» հրապարակախօսական վէպն է, որտեղ ոչ հեռաւոր պատմական փաստերը որպէս արդի արժեւորման նիւթ են ներկայացուած: «Գրական հանրային բառարանում» այսպէս էլ նշում է՝ «Հրապարակախօսութեան առարկան ամբողջ կեանքն է՝ նրա անցելով եւ ներկայով»: Իրականութեան պատկերները, մարդկային բնաւորութիւնները եւ ճակատագրերը հրապարակախօսական ստեղծագործութեան մէջ ծնունդ են առնում որպէս փաստարկներ, քամուած բուն կեանքից, որպէս ապացուցողական համակարգ, որպէս վերլուծութեան առարկա՝ կամ ծառայում են էմոցիոնալ սերմ, հիմք՝ «վճիռներ» արձակելու կամ «ինստանցիաներում հարցման» համար, իտէալի հաստատման համար: Զօրի Բալայեանի հրապարակախօսութիւնը, որպէս իր տեսակի դասական տիպ, սկզբից հիմնուած էր «կեանքից քամուած» փաստերի վրայ, ունէր «ապացուցման համակարգ», նիւթի վերլուծական յատկանիշներ: Դրա համար էլ այդ հրապարակախօսութիւնը մնաց արդիական՝ իր բոլոր կտրուածքներում: «Յաղթելով մահին» հրապարակախօսական վէպը նմանը չունի մեր ժամանակներում իր «ապացուցողական» համակարգով: «Յաղթելով մահին»-ի կոմպոզիցիոն յենակէտերը մարդկային ճակատագրերը իրենցով պայմանաւորող եւ, միեւնոյն ժամանակ, իրենցով բացայայտող փաստերն են:

Ներկայումս խորհրդային տարիների հրապարակախօսութեան ինքնուրուի շարունակում է:

Աւագները գրում են՝ ինչպէս

գրել են, նորերը խորամուխ չեն նոր տեսութիւնների մէջ, գրում են, ինչպէս կարող են: Այժմ աւելի քան երբեք, հարկաւոր է տիրապետել եւրոպական հրապարակախօսութեան փորձին, այո՛, ազատ ու բազմակարծիք հրապարակախօսութեանը: Արժէքները փոփոխուում են: Հարկ է ելնել «արժէքային պլիւրալիզմի» սկզբունքներից, որը, ինչպէս ձորձ Սորեան է գրում՝ բաց հասարակութեան գլխաւոր սկզբունքն է:

Մեր մամուլում դեռեւս իշխում են բարոյախօսական քարոզները: Մինչդեռ երբ բացակայում են բացարձակ ճշմարտութիւնները, չպէտք է անտեսել նպատակայարմարութեան սկզբունքը, որը բարոյական սկզբունքների քննարկման մէջ դառնում է ամէնից անհրաժեշտը: Թերթային «օրապակաս» հրապարակախօսութիւնը ոչինչ տալ չի կարող:

Պէտք է անցում կատարել «ապացուցողական համակարգ» ունեցող «փաստի» հրապարակախօսութեանը: Գաղափարախօսական հրապարակախօսութիւնը մայրամուտ է ապրում, իհարկէ, երբեմնի գաղափարախօսութեան հետ մէկտեղ: «Զկայ գաղափարախօսութիւն», չկայ հրապարակախօսութիւն», - մէկնաբանում է ուսու տեսաբան Տ. Ալդոշինը «Գաղափարական սկզբունքների բացակայութիւնն էլ գաղափարախօսութիւն է», - գրում է ԳԱ թղթակից անդամ Գառնիկ Անանեանը «Ակնարկներ հայոց հին եւ միջնադարեան հրապարակախօսութեան» աշխատութեան (Երեւան, 2005 թ.) «Քաղաքական խնդիրների տեսանկիւնից» առաջաբանում: Ա. Բիկ-Բուլատովը՝ Կազանի պետական համալսարանի աՍԵCaYC կազմակերպած «Հարկաւոր է մեզ հրապարակախօսութիւն» թեմայով կլոր սեղանի մասնակիցը, իր հերթին նշում է՝ «Եթէ կայ հասարակութիւնը, ուրեմն պէտք է լինի նաեւ հրապարակախօսութիւնը»: Սակայն, ինչպէս իրականութիւնն է յուշում, դա պէտք է լինի փաստի հրապարակախօսի վառ անհատականութիւնն ու խօսքն այլեւս վստահութիւն չեն ներշնչում («այժմ այլեւս ոչ ոք ոչ ոքի չի վստահում»): Կլոր սեղանի մասնակիցների խօսքերից): Հրապարակախօսն իր կարծիքը կարող է արտայայտել փաստի միջոցով:

Առայժմ այս պահանջի իրականացումը տեսնում ենք ընդդիմադիր մամուլում: Փաստերը կարծիք են հաստատում եւ «ապացուցման» տպաւորութիւն գործում: Սակայն ընդդիմադիր մամուլը, լուրջ դիտարկման պարագայում, փաստերը փոխարկում է բամբասանքային «ժանրի», որը լուրջ ընթերցողին նիւթից վանում է: Իր հերթին պաշտօնական մամուլը, ճշմարտութեանը հետամուտ լինելու անհրաժեշտութիւնից ելնելով, կարող է օգտուել բացասական փաստերից, հաստատելով ճշմարտութիւնը, որը սակայն չի արւում:

Թերեւս սա է պատճառը, որ արդի հրապարակախօսութիւնը կորցրել է երբեմնի վստահութիւնն ու ազդեցութեան ուժը:

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

### ՀԱՋԱՐԻ (ՄԱՌՈՒԼ, LETTUCE) ՕԳՏԱԳԱՐՈՒԹԻՒՆԸ

#### ՋՈՒԼԻՆԵՍԱ ՍԱՀԱԿԵԱՆ

LACTUCA SATIVA - հազար մշակովի, աղցանախոտ, մառուկ կաթնուկ:

Հնագույն ժամանակներից մշակուել է Հին Եգիպտոսում, Յունաստանում, հայկական լեռնաշխարհում, Հռոմում: 15-րդ դարի հայ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացին իր դեղամիջոցների միջնադարեան հանրագիտարանում մառուկի վերաբերեալ գրում է. «Հազարը վանում է անթուլթիւնը, օգնում է մելամաղձուկեան դէպքում, անցկացնում է շոգից առաջացած գլխացաւը, առատացնում է մայրերի կաթը, սրում է տեսողութիւնը»: Եւրոպայում մառուկը յայտնուել է 16-րդ դարի կէսերին, Ռուսաստանում՝ 17-րդ դարից: Իր արժէքաւոր յատկութիւնների շնորհիւ մեծ կիրառութիւն ունի, մանաւանդ Ֆրանսայում, ԱՄՆ-ում եւ Ռուսաստանում:

Աշխարհի տարբեր վայրերում հանդիպում է վայրի աղցանախոտ, որի բարձրութիւնը հասնում է մինչեւ 1 մետրի: Տերեւի եւ ցողունի մէջ պարունակուել է սպիտակ կաթնաչին հիւթ, որն ունի ցաւազրկող, քնաբեր, միզամուղ, լուծողական յատկութիւններ: Բոյսը պէտք է օգտագործել զգուշութեամբ. այն թունաւոր է: Բոյսի տերեւների մի մասն ուղղուած են դէպի հարաւ, միւս մասը հիւսիս, որի պատճառով բոյսը ստացել է կողմնացուցային աղցանախոտ անուանումը:

Մշակովի աղցանախոտն ունի բազմաթիւ տեսակներ տերեւային, գլխիկաւոր, ռոմէն, էնդիվի, եղերդի, կրես:

Տերեւային մառուկը ցրտադիմացկուն է, սերմնացանքից մինչեւ

բերքահաւաք անցնում է մոտ 40 օր. գլխիկաւոր մառուկի դէպքում հասունացման ժամկէտը մօտ 70 օր է, իսկ ռոմէն տարատեսակի դէպքում՝ մօտ 3 ամիս: Վերջին տարիներին մեծ տարածում է ստացել կրես տեսակը, որը հեշտութեամբ աճում է տնային պայմաններում: Մառուկի համար առաւել պիտանի են ոչ թթու, թեթեւ, փոխար, հումուտով հարուստ հողերը: Ռոմէն եւ գլխիկաւոր տեսակներն աւելի լուսասէր են, քան տերեւային տեսակները: Տերեւային մառուկը հանում են արմատով: Իսկ գլխիկաւոր եւ ռոմէն աղցանախոտի տերեւավարդակները կտրում են դանակով հողի մակերեսին մօտ: Աշնան սկզբում հողից հանած եւ նկուղում աւազի մէջ թաղած ռոմէն աղցանախոտը պահպանում են 3-4 աստիճան C-ի տակ, մինչեւ Յունուար ամիսը, երբ այն դառնում է սպիտակ եւ աւելի համեղ: Եղերդի աղցանախոտը, ի տարբերութիւն միւս մշակովի տեսակների, երկամեայ բոյս է, ունի զարգացած պտղարմատ, որից, ձմրանը նկուղում պահելիս, ծլում է համեղ վիտամինային կանաչի: Աղցանախոտի տարբեր տեսակների քիմիական բաղադրութիւնը քիչ է տարբերում:

Տերեւային մառուկը պարունակում է մօտ 1,2% շաքարներ, մինչեւ 2,5% սպիտակուց, կիտրոնաթթու, բոյսին բնորոշ լակտոցին, լակտոցերին, լակտոցիկտին նիւթեր: Մառուկը վիտամինների անփոխարինելի արժէքաւոր աղբիւր է: Բոյսի մէջ առկայ են գրեթէ ողջ B խումբը, տիամին (0,03 մգ 100 գրամի մեջ), ռիբոֆլաւին (0,08), պանտոտենային թթու (0,1), պիրիդոքսին (0,18), ֆոլիկաթթու (48 միկրոգրամ), նիացին

(0,65), տոկոֆերոլներ (0,66), ասկորբին աթթու (30-120 առաւելագույն՝ կրես տեսակում), բիոտին, բիոֆլաւոններ, ֆիլոխինոն (K): Կարոտինի պարունակութիւնը (1,75 մգ) բաւարարում է մարդու օրգանիզմի մէկ օրուայ պահանջը: Մառուկը պարունակում է կրեմնիում, յօդ, ծծումբ, երկաթ, կալցիում, որոնք շատ կարեւոր են եղունգների առողջութեան համար:

Մարդու օրգանիզմի համար կարեւոր է կալցիումի իւրացումը օրգանիզմում, որը կախուած է ոչ միայն դրա ընդունման քանակից, այլ նաեւ՝ մագնիւմի, ֆոսֆորի հետ յարաբերութիւններից: 100 գրամ մառուկի մէջ պարունակուել է 220 մգ կալիւմ, 77 մգ կալցիւմ, 40 մգ մագնիւմ, 35 մգ ֆոսֆոր: Նիւթերի նման յարաբերակցութիւնը բարենպաստ է կալցիումի իւրացման համար:

Մառուկի օգտակար նիւթերի համատեղութիւնն այնպիսին է, որ այս տերեւաբանջարային մշակաբոյսը անփոխարինելի դիետիկ սնունդ է վահանաձեւ գեղձի եւ շաքարային դիաբետի հիւանդութիւնների դէպքում: Մառուկն բնորոշ լակտոցինը հանդարտեցնում է նեարդային համակարգը, օգտակար է այտուցների, մաշկային հիւանդութիւնների, ալերգիայի, անքնութեան դէպքում: Մառուկի կանոնաւոր կիրառումը սննդի մէջ զգալիօրէն լաւացնում է մարսողութիւնը, ակտիւացնում մակերիկամի աշխատանքը:

Շատ օգտակար է լեարդին եւ լեղապարկին, քանի որ կանխում է աւազի եւ քարերի առաջացումը: Ունի բարերար ազդեցութիւն ստամոքսաբորբի դէպքում: Մառուկը պարունակում է երկաթ (30 մգ), որի շնորհիւ լաւանում է արեան որակային բաղադրութիւնը եւ շրջանաւարտութիւնը: Մառուկը հակացուցում է երիկամի մէջ ֆոսֆատ

տային եւ օկսալտային քարերի առկայութեան եւ ստամոքսի խոցի հիւանդութեան սրացման դէպքում:

- Հազարով դեղատոմսեր
- Վահանաձեւ գեղձի համար օրական 3 անգամ, սնունդ ընդունելուց առաջ խմէք 100-ական մլ մառուկի կանաչ լոբու պատիճների, գազարի (4:3:6 համադրութեամբ) հիւթերի խառնուրդը:
- Շաքարային դիաբետի եւ գիրութեան դէպքում՝ որպէս դիետիկ սնունդ, օրը 50-100 գրամ մառուկի տերեւ օգտագործէք:
- Ալերգիաների դէպքում՝ օրուայ ընթացքում խմէք մառուկի եւ գազարի (2:3) 100-ական մլ հիւթերի խառնուրդը:
- Հիպերտոնիայի եւ քրոնիկ ստամոքսաբորբի դէպքում թրմէք 20 գրամ մառուկի տերեւները 200 մլ եռջրի մէջ՝ 2 ժամ: Խմէք կէսական բաժակ, օրը 2 անգամ:
- Աթերոսկլերոզի դէպքում. վերցրէք հաւասար քանակութեամբ մառուկի տերեւը, գազարը, բողկը եւ բազուկը:
- Խառնէք բլենդերով՝ մինչեւ ստացուի համասեւ զանգուած: Խմելուց առաջ խառնէք ջրի հետ (1:1): Ընդունէք 50-ական գրամ, օրը 3 անգամ:
- Այրոցների դէպքում խմէք 25-30 գրամ մառուկի հիւթը խառնած գազը հանած հանքային ջրի հետ:
- Մաստոպատիայի ժամանակ կրծքի ցաւոտ հատուածին թարմ մառուկի մանրացրած տերեւներով կոմպրես դրէք:
- Պահէք 2 ժամ: Կրկնէք օրը մի քանի անգամ: Կերէք 20-ական գրամ մառուկի թարմ տերեւներ, օրուայ ընթացքում:
- Չիբանի դէպքում մառուկի տերեւներն ընկղմէք եռման ջրի մէջ, գոլ վիճակում դրեք հասունացող չիբանի վրայ եւ կապէք:

## AMERICAN RELIABLE WINDOWS

Beautifully while increasing the value of your home with elegant,

**18 months no interest\*** Financing O.A.C

**ENERGY EFFICIENT WINDOW AND DOORS.**

Vinyl, Wood, Fiberglass, Clad or Aluminum Replacement, Retro or New Construction

**Our Windows Qualify For Tax Credits**

Manufacturers rebates & deep discounts available NOW. Product, Pricing and Financing to meet any Budget.

**888-804-7250**  
Your Satisfaction is Guaranteed.

Licensed • Certified • Insured CSLB LIC#901591






**D.W.P. REBATES**

www.americanreliablewindows.com

**\$89** Rebate\* toward the price of new Vinyl Windows

Rebate Example:  
5 windows = \$445  
10 windows = \$890  
15 windows = \$1335

Serving Los Angeles, Ventura, Orange, & San Bernardino Counties

### ՍԻՆԿԱՓՈՒՐԻ ՀԱՅԵՐԸ ՆՇՈՒՄ ԵՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ 175-ՐԴԸ ՏԱՐԵԴԱՐՁԸ



Սինկափուրի հայկական համայնքը Կիրակի տօնեց Հայց. Առաք. Եկեղեցու 175-ամեակը, որու կապակցութեամբ կազմակերպուած տօնակատարութիւններուն մասնակցելու համար 14 երկրներէ աւելի քան 160 հայեր ժամանած էին:

Սինկափուրի Հիլ Սթրիթին վրայ գտնուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին ամենահին քրիստոնէական եկեղեցին է եւ ազգային յուշարձան է դարձած է 1973 թ.:

Այդ օրուայ առթիւ եկեղեցու հոգաբարձուները շաբաթ Կալա ընթրիք կազմակերպած էին «Ռաֆլզ» հիւրանոցին մէջ՝ «սինկափուրեան եզակի յուշարձանին մէջ», որ 1887 թ. կառուցած են հայագրի եղբայրներ Տիգրան եւ Աւետիք Մարգիսները:

Կիրակի յատուկ այդ նպատակով Սինկափուր ժամանած արքեպիսկոպոսը պատարագ մատուցած է Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու մէջ:

Սինկափուրի արտաքին գործերի նախարար ձորջ Յեոն, որ նոյնպէս մասնակցած է պատարագին, The Straits Times թերթին տուած իր հարցազրոյցին ըսած է, որ հայկական եկեղեցին եւ համայնքը Սինկափուրի ժառանգութեան կարեւոր մասն են:

Սինկափուրում այժմ կ'ապրի շուրջ 80 հայ: Փոքրաթիւ համայնքը վերջին հինգ տարիներուն կրկնապատկուած է՝ հիմնականին մէջ Հայաստանէն տեղափոխուածներու հաշուով: Վերջին երկու տարիների ընթացքին Սինկափուրում 10 հայ երեխայ ծնած են:

### ԼԱԻ ԿԸ ԼԻՆԻ...

### ՅՈՒՍԱԴՐՈՒՄ ԵՆ ՀԲ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Հայաստանում անանապահութիւնը այն բացառիկ ոլորտներից է, որը արդէն 7 տարի է՝ աճ չի ապահովում: Գիւղատնտեսներն ահազանգում են, որ անանապահութեան ոլորտում եղած հնարաւորութիւնները ամբողջութեամբ չեն օգտագործւում: Գիւղամերձ արօտավայրերը էրօգիայի են ենթարկուել՝ կորցնելով իրենց արդիւնաւէտութիւնը, իսկ հեռագնայ արօտներն էլ ֆերմերներին հասանելի չլինելու պատճառով չեն գործածւում:

Համայնքային արօտավայրերի օգտագործման արդիւնաւէտութիւնը բարձրացնելու նպատակով Համաշխարհային բանկը (ՀԲ) Հայաստանին \$16 միլիոն վարկ տրամադրելու որոշում է ընդունել: Երէկ այս մասին յայտարարեց ՀԲ երեւանյան գրասենեակի ղեկավար ժան Միշել Հապին: Նրա տեղեկացմամբ, ծրագրի ընդհանուր արժէքը \$21,33 միլիոն է, որից \$5,33 միլիոնը կը համաֆինանսաւորի ...

### ԳԻՄՐԻՈՒՄ ԲԺԻՇԿ ԵՆ ԿԱԼԱՆԱԲՈՐԵԼ

Պաշտօնական դիրքն օգտագործելու, լիազօրութիւնները չարաշահելու, խոշոր չափի կաշառք վերցնելու ու իւրացնելու մեղադրանքով նախորդ օրը կալանաւորուել է Գիւմրու է. Մատեյի անուան իտալական պոլիլիինիկայի տնօրէն Տաթևիկ Փանոսեանը: Տիկնոջ դէմ Շիրակի մարզի քննչական բաժնում թէեւ նիւթեր էին նախապատրաստում դեռեւս 2010թ. Սեպտեմբերից, սակայն մեղադրանք է առաջադրուել նոյն թուականի Դեկտեմբերի 15-ին՝ Քրէական օրէնսգրքի 3 ծանր յօդուածներով՝ 311 յօդուածի 3-րդ մասի 3-րդ կէտով, այն է՝ խոշոր չափի կաշառք վերցնելը, 179 յօդուածի 2-րդ մասի 2-րդ կէտով եւ 308 յօդուածի 1-ին մասով՝ պաշտօնական դիրքն օգտագործելով խոշոր չափի իւրացում կատարելը: Նախորդ օրը Շիրակի մարզի ընդհանուր իրաւասութեան դատարանը որոշել է որպէս խափանման միջոց ընտրել կալանքը, սակայն Տաթևիկ Փանոսեանի սիրտն այնքան է վատացել, որ նրան անմիջապէս տեղափոխել են Գիւմրու մարզային հիւանդանոց:

### ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ԱՏՐՊԵՅՅԱՆԻ ԳԼԽԱԲՈՐ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ ՄԵՂԱԴՐՈՒՄ ԵՆ ԲՈՆԱԲԱՐՈՒԹԵԱՆ ՍԷՋ

Սանկտ-Պետերբուրգում Ատրպէյճանի հիւպատոս Գուրսի Օսմանովը հերքում է մի 15-ամեայ աղջկայ բռնաբարութեան մասին մեղադրանքները, եւ համարում դրանք գրպարտութիւն: «Եթէ նման բան եղած լինէր, նրանք կը դիմէին իրաւապահ մարմիններին», - որպէս արդարացում ասել է ատրպէյճանցի դիւանագէտը:

«Այդ սադրանքի հետեւում, որ տեղի է ունեցել Նովրուզի տօնակատարութեան ժամանակ, բնականաբար ինչ որ մարդիկ են կանգնած: Մենք տեսնել թէ ունենք, որոնք բողոքի նոտայի հետ միասին ուղարկուել են Ռուսաստանի ԱԳՆ: Մօտ ժամանակներս Ռուսաստանի իրաւապահ մարմինները կ'ուսումնասիրեն այդ գործի հանգամանքները», - ատրպէյճանական գործակալութեանը տուած հարցազրոյցում ասել է Օսմանովը:

Յիշեցնենք, որ այս տարուայ Մարտի 19-ին՝ Սանկտ-Պետերբուրգում, Նովրուզի տօնակատարութեան առիթով Ատրպէյճանի հիւպատոսի ելոյթի պահին անյայտ անձը բարձրախօսը ձեռքին խոչընդոտել է նրա ելոյթին: Մատնացոյց անելով իրենից ձախ նստած աղջկան՝ նա ՌԳ-ում Ատրպէյճանի գլխաւոր հիւպատոսին մեղադրել էր այդ աղջկան բռնաբարելու մէջ:

### ՉԻՆԱԿԱՆ ԾԱՂԿԱՄԱՆԸ ԿԱՃԱՌՈՒԵԼ Է 22,500 ԱՆԳԱՄ ԱԻԵԼԻ ԹԱՆԿ, ՔԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՆՆ ԷՐ

Sotheby's առեւտրի տանն արձանագրուել է աննախադէպ իրադարձութիւն: 800-1200 տոլար գնահատուած չինական ծաղկամանը վաճառուել է 18 մլն տոլարով: Այս մասին հաղորդում է ArtInfo կայքը: Այս սենսացիոն աճուրդի պատճառն այն է, որ մասնագէտները չեն կարողացել յստակ որոշել, թէ որ դարի է արուեստի այդ գործը:

Sotheby's առեւտրի տանը կարծում են, որ դա 20-րդ դարի սկզբի աշխատանք է: Սակայն այլ մասնագէտներ, որոնք «անողք» պայքար են մղել այս ծաղկամանի համար, կարծում են, որ այն պատկանել է Յյանլուն կայսրին եւ թուագրուած է 18-րդ դարով:

Sotheby's աճուրդների տանն էլ են կասկածներ ունեցել այս լոտի վերաբերեալ, քանի որ դրա նկարագրման մէջ նշել են, որ այս աշխատանքը բնորոշ է Յյանլուն կայսեր ժամանակ կատարուած աշխատանքներին:

### ԿԱՐՃԱՆՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

- Տղամարդը կարող է երջանիկ լինել իւրաքանչիւր կնոջ հետ, եթէ միայն սիրահարուած չէ նրան:

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴ

- Մարդու գլուխը նրա համար է դրուած վերեւում, որ մարդը չքայլի ոտքերը վեր:

ԿՈՉՄԱ ՊՐՈՒԴԿՈՎ

-Դեռ ոչ մի հետիտոն ոչ մի մեքենայի վրաերթի չի ենթարկել, բայց եւ այնպէս, չգիտես ինչու, դժգոհողները վարորդներն են:

ԻԼԻԱ ԻԼՅ

- Յաղթողներին չեն դատում, պարզապէս կախում են առանց դատ ու դատաստանի:

ԴՈՆ ԱՄԻՆԱԴՕ

- Ես հարիւր գրամից աւելի չեմ խմում, բայց հարիւր գրամ խմելով՝ ուրիշ մարդ եմ դառնում, իսկ այդ ուրիշը չափից դուրս շատ է խմում:

ԷՄԻԼ ԿՐՈՏԿԻ

Դիւանագէտն այն մարդն է, ով ոչինչ չասելուց առաջ երկու անգամ է մտածում:

ՈՒԻՆՍՏՈՆ ՉԸՐՉԻԼ

- Ինչ-որ ժամանակ դա լաւ հիւրանոց էր, որը ոչինչ չի ասում, քանի որ ինչ-որ ժամանակ ես էլ լաւ տղա էի:

ՄԱՐԿ ԹՈՒԷՆ

Թարգմ.՝ ՆԱՅԻՐԱ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծածախանկերու և մանուկներու Քարոսթիոթերապիա բուժում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յոզային և սկաւային ցաւեր:  
Ինքնաշարժի վթարի նեւրոլոգիկ պատահած վնասուածքներու բուժում:  
Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ArmenienInfo.net

---

News. Informationen. Kommentare.

ՇԱՐԼ ԱՉՆԱԻՌԻ ՊԻՏԻ ՄԵԾԱՐՈՒԻ ՆԻԻ ԵՈՐՔԻ ՄԵՋ

Շարունակուած էջ 8-էն

Ազնաւուրի հայրը Ֆրանսական բանակին միանալով իր ծնողները փակած են ճաշարանը: Ինք հասակ առած է երաժշտական սիրոյ եւ չքաւորութեան միջնորդութի մը մէջ: Ազնաւուր իրախուսուած էր կատարողական արուեստով: Ան իր ընտանիքին օգնելու համար մանուկներու հետ շրջագայութեան ելաւ: Մինչեւ իսկ պողոտաներու վրայ սկսաւ թերթեր ծախել:

«Ես իմ հօրմէս սորված եմ երգի ու երաժշտութեան մասին, իսկ թատրոնի եւ բանաստեղծու-

ես կատարեցի զանոնք: Մնացեալ բոլորը ինձմէ ետք եկան»:

Ինք կը նկատուի Ֆրանսայի Ֆրանզ Սինաթրան: Երգած է 9 տարբեր լեզուներով աշխարհի մեծագոյն դահլիճներուն մէջ, ինչպէս Գարնէկի եւ Ռէտիօ Սիթի: Իր երգերը She Dance in the old Fashioned way, Yesterday When I Was Young երգերն իր առաջին արտադրութիւններն էին, որոնք գինք առաջնորդեցին դէպի մրցանիշ հաստատող միջազգային շուկայ: Այս գործերը մեկնաբանուած են նաեւ աշխարհի նշանաւոր երգիչներու կողմէ: Իսկ Ils sont tombes



թեան մասին ալ իմ մօրմէս: Հասակ առի երգիչներու, դերասաններու եւ պարողներու հայկական եւ ռուսական միջավայրի մը մէջ, հրէական կեդրոնացման կայանէն ներս:

Սակայն յաջողութիւնը իր մնացուն ընկերը չեղաւ: Ան իր բեմական կեանք սկսաւ 9 տարեկանին, իբրեւ դերասան եւ պարող: Ան քսան տարի պայքարեցաւ թատերական աշխարհի գագաթին հասնելու համար: Իր անհատականութիւնն արժեւորուեցաւ երբ իր գրած երգերն սկսան երգուիլ Էտիթ Փիաֆի, Միսթրինկէթի, Մօրիս Շէվալիէի, Ժիւլիէթ Կրէզոյի եւ այլոց կողմէ:

«Ես դանդաղորէն յաջող գրող մը դարձայ: Իմ երգերս այնքան ժողովրդականացան Ֆրանսայի մէջ որ օրին մէկը վերջապէս, ընդունեցին այն մարդը որ զանոնք գրած էր: Ես սկսայ այնպէս երգել որ աւրջութիւն ունենար իրական կեանքի, ամէնօրեայ շարժումներու, ապրումներու եւ զգացումներու հետ: Անցեալին ոչ ոք չէ գրած խուլ ու համր սիրոյ, միասեռական սիրոյ եւ կամ երգ մը տգեղ կնոջ մասին: Բոլորն ալ կը վախնային:

(«Անոնք ինկան») երգը որ նուիրուած է Հայոց Յեղասպանութեան զոհերուն, լաւագոյն վաճառուածը (best seller) նկատուած է շատ մը երկիրներու մէջ:

Գալով Ազնաւուրի լաւագոյն ֆիլմին՝ անիկա «Չարկ Դաշնակահարը» (Shoot the Piano Player) է եւ ցուցադրուած բազմաթիւ անգամներ: Ան մօտ ապագային դարձեալ պիտի ցուցադրուի Լինքոլն Կեդրոնի Ուայթըր Ռիտըր թատերասրահին մէջ:

1998ին CNN-ի կողմէ հռչակուած է դարաշրջանի մենակատարը: Ան արժանացած է բազմաթիւ պատուոց տիտղոսներու ինչպէս National Order of the Legion of Honor եւ Հայաստանի Ազգային Հերոս կոչումը: Ամուսնացած է երեք անգամ, ունի վեց զաւակ եւ ներկայիս կը բնակի Ժընեւի մէջ, Զուիցերիա:

**INVITATION FOR BIDS (IFB) NO. 1707**  
**THE RENOVATION OF THE 1st AND 2nd FLOORS AT 515 COLUMBIA AVE., LOS ANGELES, CA 90017**  
  
The Housing Authority of the City of Los Angeles invites vendors to submit bids for The Renovation of the 1st and 2nd Floors at 515 Columbia Ave., Los Angeles, Ca 90017. Copies of the IFB may be downloaded online beginning March 20, 2011, at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100, Los Angeles, CA 90057, until 2:00 p.m. (local time), April 20, 2011.  
  
3/24, 3/31/11  
CNS-2060815#  
MASSIS WEEKLY

**REQUEST FOR QUALIFICATIONS (RFQ# 7547)**  
  
The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites qualified engineering firms to develop and prepare a vested tentative Tract Map for the entire project with a final map for Phase I for the proposed HACLA-owned Jordan Downs Redevelopment Project based upon the Jordan Downs Community-Based Master Plan in accordance with the Subdivision Map Act and applicable City of Los Angeles requirements. Copies of the RFQ may be obtained beginning March 14, 2011 online at http://www.hacla.org/ps. Proposals will be accepted until 2:00 P.M., April 8, 2011.  
  
3/24, 3/31/11  
CNS-2060616#  
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՌՈՒՄԱՄԵՏ

Շարունակուած էջ 6-էն

Եւ Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականութիւնը: Այսպէս, գերմանական ղեկավարութեան հանդէպ բաւական դրական մօտեցում ունի հայաստանցիների 57, իսկ Մեծ Բրիտանիայի նկատմամբ՝ 45 տոկոսը:

Անդրադառնալով հարեւան թուրքիային՝ նշեմ, որ այս երկրի բնակիչները աչքի են ընկնում գերտէրութիւնների եւ դրանց ղեկավարների մասին ունեցած իրենց բացասական կարծիքով: Այսպէս, Ռուսաստանի նկատմամբ դրական է տրամադրուած թուրքերի 21 տոկոսը, իսկ բացասաբար՝ 36-ը: Աւանդաբար Անքարային աջակցող

Մեծ Բրիտանիայի ղեկավարների քաղաքականութիւնը դրական է գնահատել թուրքերի 23, իսկ բացասաբար՝ շուրջ 34 տոկոսը: Գերմանիայի պարագայում այս ցուցանիշները գրեթէ հաւասար են՝ 31 տոկոս բացասական եւ 30 տոկոս դրական:

Ընդհանուր առմամբ Gallup-ի տուեալները վկայում են, որ աշխարհում գերտէրութիւններն այնքան էլ բարձր վարկանիշ չունեն: Ռուսաստանի ղեկավարութեան գործունէութիւնը արդիւնաւէտ է համարում աշխարհի բնակիչների ընդամէնը 27 տոկոսը, Մեծ Բրիտանիայինը՝ 35, իսկ, ասենք, Ֆրանսայինը՝ 39 տոկոսը:

**ՇՆՈՐԱԿԱԼԻՔ**  
**ԱՐԱՄ ՄԱԹՈՍԵԱՆԻ** զաւակները, **Տէր եւ Տիկ. Յարութ Մաթոսեան, Տօքթ. եւ Տիկ. Գուրգէն Մաթոսեան եւ Տօքթ. եւ Տիկ. Համօ Մաթոսեան** շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց հօր մահուան աւթիւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ, այցելութեամբ ու հեռաձայնով:  
Առ այդ հանգուցեալի զաւակները \$300 տոլար կը նուիրեն «Մասիս»-ի բարգաւաճման ֆոնտին:

**ՑԱԿԱՑԱԿԱՆ**  
**ԱՐԱՄ ՄԱԹՈՍԵԱՆԻ** մահուան տխուր առիթով **Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Անահիտ Խաչոյեան** իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն համայն Մաթոսեան ընտանիքին եւ հարազատներուն:  
Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 տոլար կը նուիրեն «Մասիս»-ին:

**ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ**  
Մի ոմն գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութիւնը \$100 տոլար կը նուիրէ մեր օրկանի բարգաւաճման ֆոնտին:

**Burbank Airport Bid Request**  
**General Contractors**  
  
Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E11-03, Module 12.8 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, April 28, 2011. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for: Forty (40) Single Family Condo Units. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. A mandatory Pre-bid conference has been scheduled for April 7, 2011, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California.

**REQUEST FOR PROPOSALS (RFP# 7543)**  
**PROGRAM/PROJECT MANAGEMENT SERVICES**  
  
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in providing Program/Project Management Services. Copies of the RFP may be obtained beginning March 21, 2011 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted until 2:00 P.M., April 22, 2011.  
  
3/31, 4/7/11  
CNS-2064163#  
MASSIS WEEKLY

**REQUEST FOR PROPOSALS (RFP# 7546)**  
**OFFICE RELOCATION & RECONFIGURATION**  
  
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in providing Office Relocation & Reconfiguration Services. Copies of the RFP may be obtained beginning March 21, 2011 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted until 2:00 P.M., April 11, 2011.  
  
3/31, 4/7/11  
CNS-2065417#  
MASSIS WEEKLY

**REQUEST FOR PROPOSALS (RFP# 7543)**  
**PROGRAM/PROJECT MANAGEMENT SERVICES**  
  
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in providing Program/Project Management Services. Copies of the RFP may be obtained beginning March 21, 2011 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted until 2:00 P.M., April 22, 2011.  
  
3/31, 4/7/11  
CNS-2064163#  
MASSIS WEEKLY

**REQUEST FOR PROPOSALS (RFP# 7546)**  
**OFFICE RELOCATION & RECONFIGURATION**  
  
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in providing Office Relocation & Reconfiguration Services. Copies of the RFP may be obtained beginning March 21, 2011 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted until 2:00 P.M., April 11, 2011.  
  
3/31, 4/7/11  
CNS-2065417#  
MASSIS WEEKLY

### ԱՐԱՄ ՀԱՅԿԱԳԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է 14-էն

յին Հայաստանը հայութեան միակ Հայրենիքն է: Վերադարձի ճանապարհին Մոսկովա հասնելուն պէս գրում է կնոջը, թէ կարօտել է Երեւանը:

Արամ Հայկազը յոյս ունէր, թէ Հայաստանում կը հրատարակեն իր գրքերից, մշակեց ու խմբագրեց Քիւրտիստանի լեռներում ապրած տարիների մասին պատմող հատուածները, բայց ծրագիրը չիրականացաւ: Աւելի ուշ Սփիւռքի հայ գրողների պատմուածքների ժողովածուներում տպագրուեցին նրա երկերից, բայց Արամ Հայկազի գրականութիւնը հիմնականում անծանօթ մնաց Հայաստանի ընթերցողների լայն շրջաններին, ինչպէս ընդունուած էր ասել:

Բարեբախտաբար հասցրինք «Արամ Հայկազ. Մոռացուած էջեր» գրքի Ա հատորը ժամանակին հրատարակել եւ գրողի նամակների հատորակի հետ նուիրել ամերիկացի աշխատակցին հայերին, որոնք մասնակցեցին Ամերիկայի Արեւելեան ափի հայահոծ մի քանի քաղաքներում կազմակերպուած Նոբելեանական հանդէսներին ու գրողի երեք գրքերի շնորհանդէսներին. գրողի դուստրը՝ Ագրիս Հայկազը, վերահրատարակել է Տօր առաջին գիրքը՝ «Aram Haigaz, The fall of the Aerie («Արծուաբնի անկումը»)», որ լոյս է տեսել Պոսթոնում, 1935 թ.: Գրքի մի քանի օրինակներ բերել ենք Երեւան՝ գրադարաններին տալու:

Դժբախտաբար այսօր էլ կան տիտղոսակիր «մասնագէտներ», որոնք, առանց ծանօթ լինելու Արամ Հայկազի թողած գրական ժառանգութեանը, զարմանում են, թէ ինչո՞ւ ենք այսքան ջանք ու եռանդ նուիրում նրա գրականութեան պատկերն ամբողջացնելուն՝ հրատարակելով նախ նամակների հատորը, հիմա էլ ծրագրել ենք «Արամ Հայկազ. Մոռացուած էջեր» քառահատորը, որի Ա գիրքն արժանի նուէր է գրողի նոբելեանին:

Ծանօթ պատկեր է. տարիներ առաջ նման դժգոհութիւններ լսել ենք «Համաստեղ. Մոռացուած էջեր» քառահատորի հրատարա-

կութեան առիթով, մինչեւ որ յաջողուեց մի քիչ «համաստեղոտել» չկարգացած երկերի, գրողների մասին չարախօսելու սովորութիւն ունեցող «ամենագէտներին»: Կրկնութիւնն այս դէպքում դժբախտաբար կատակերգութիւն չէ, ինչպէս պնդում է իմաստուն խօսքը, բայց համոզուած ենք՝ Արամ Հայկազ հայի, գրողի յամառ լաւատեսութիւնն ու աշխարհի չարիքի վրայ ծիծաղելու անկողում կամքը կ'օգնեն յաղթահարել արհեստական դժուարութիւնները: Արամ Հայկազի գրական ժառանգութիւնը միշտ ասելիք ունի հայութեանը: Համոզուած ենք՝ «Արամ Հայկազ. Մոռացուած էջեր» գրքի հատորները պիտի դառնան Հայ մարդու սեղանի գիրք, առաւել եւս՝ գրականագէտների, որ տարիներ անց ազգովին չափստանք բաց թողած եզակի հնարաւորութեան համար ու չապրենք պատեհ առիթը կորցրած մարդու ցաւը:

1. Այրիս Չեքեմեանը մեզ հասցեագրուած նամակում ճշտում է Արամ Հայկազի եղբայրների անունները՝ Յակոբ, Գարեգին, Զոհրապ, Հայկազ: Նա պատմում է նաեւ Հայկազի նահատակութեան մասին:
2. Այդ յօդուածներից մէկը, յուշագրութիւնից Յ. Օշականին նուիրուած հատուածը հրատարակել ենք «Արամ Հայկազ. Մոռացուած էջեր» գրքի Ա հատորում:
3. Արամ Հայկազ, Յեղին ձայնը, Նիւ Եորք, 1949:
4. Արամ Հայկազ, Երջանկութիւն, Պէյրութ, 1978, էջ 81:
5. Արամ Հայկազ, Չորս տարի Քիւրտիստանի լեռներում մէջ, Անթիլիաս, 1972, էջ 350:
6. Սփիւռքահայ պատմուածք, հատոր 1, Երեւան, 1984, էջ 375:
7. Արամ Հայկազ, Յեղին ձայնը, հ. 2, Նիւ Եորք, 1954, էջ 279:
8. Արամ Հայկազ, Չորս աշխարհ, Նիւ Եորք, 1962, էջ 27:
9. Արամ Հայկազ, Կարօտ, Պէյրութ, 1971, էջ 24:
10. Յ. Թումանեան, Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հ. 7, Երեւան, 1995, էջ 148:
11. Արամ Հայկազ, Երջանկութիւն, Պէյրութ, 1985, էջ 84:
12. Համաստեղ:

### ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒՄԾ ՀԱՅՐ ՏԱՃԱՏ Ծ. ՎՐԴ. ԵԱՐՏԸՄԵԱՆԻ

Շարունակում է 7-էն

Գրիգոր Նարեկացիի «Ողբ»ի եւ Հայր Տաճատի «Հաղորդութիւն» գիրքին միջեւ, ուր կը տեսնուի մարդկութեան ցաւերն ու մեղքերը շալկելու պատրաստակամութիւնը:

Կ'իմանանք թէ Հայր Տաճատի այս գործը 10,000 տպաքանակով պիտի հրատարակուի եւ հայ հաւատացեալներուն բաժնուի:

Հայր Տաճատի վաստակը գնահատող շնորհաւորական ելոյթներով հանդէս եկան Գրիշ Դաւթեան, Գեորգ Քրիստիանեան, Գարուշ Հարեանց եւ ուրիշներ:

Շնորհակալական խօսքով ելոյթ ունեցաւ Հայր Տաճատ, գնահատանք արձանագրելով երեկոյի կազմակերպիչներուն, յայտագրի մաս կազմողներուն եւ ներկայ հասարակութեան:

Յիշատակելի ձեռնարկի եզրափակումը կատարեց Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան: Ան անդրադառնալով Հայր Տաճատի գործին ըսաւ «Իր բանաստեղծութիւններուն մէջ

Հայր Սուրբը կը հաստատէ Աստուած ու մարդ հաղորդակցութեան նոր եռանդ ու շեշտ, որ անտարակոյս կը բացատրէ մարդուն հոգեւոր միութեան ծալքերուն մէջ՝ դեռ լոյսին չի բացուած ապրումները: Իր գրած բանաստեղծութիւնները հայելին են մարդու հոգեւոր աշխարհին, իր ներքին բոլոր շարժումներով, որոնք կը միտին մեզ առաջնորդել, հորիզոնէն անդին, Աստուծոյ գծած ճանապարհէն, որուն ընթացքին մէջ ապրող Հայր Տաճատ հոգեւորակալը մեզի կը ներկայանայ վանականի իր կերպարով, որուն քաջութիւնը իր Մայր Եկեղեցիի գիրկը վերադառնալու պատմութիւնը, իրականաբար իր գնահատութիւնը պիտի արձանագրէ անտարակոյս:

Իր ելոյթի աւարտին Յովնան Սրբազան յայտարարեց որ այս տարի, Արեւմտեան Թեմը արժանավայել կերպով պիտի նշէ Հայր Սուրբի քահանայական ձեռնադրութեան 40-ամեակը եւ այս առիթով պիտի տպագրուի նաեւ իր հեղինակած գիրքերէն մէկը:

### ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave  
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

### ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ  
(200 ԸՈԳԻ ՎԱՍԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA

ԸՆՈՒԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

### ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳԱՅՅՈՂ  
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ մնջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ցաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝  
(818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

### ՔԱՉ ՆԱԶԱՐ

ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան

Ժամը 10:00-ից 12:30

Կլէմէնտի 380-րդ կայանից

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

### ՄԱՍԻՍ

ԱՄԵՆԱՎԱՍԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒԻՐԵՐՈՒ

# NOW OPEN SUNDAYS!



## MISSION ~ WINE & SPIRITS ~

**GLENDALÉ STORE ONLY!**

### ԱԶՔԸ ԼՈՅՍ՝ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԽՄԻՉՔ ՍՊԱՌՈՂՆԵՐՈՒՆ

Mission Liquor խմիչքի հաստատութիւնը որ փակ կը մնար Կիրակի օրերը, յետ այսու եւ միայն ԻՐ ԿԼԵՆՏԷՅԼԻ մասնաճիւղը պիտի բանայ ամէն Կիրակի, առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 4-ը, սկսեալ՝ Կիրակի Մարտ 6-էն: Կլենտէյլի հասցէն է՝

GLENDALÉ

825 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91202  
(818) 242-0683 • Mon-Sat. 9AM-8PM • Sunday 10AM - 4PM

PASADENA

1785 E Washington Blvd., Pasadena, CA 91104  
(626) 794-7026 • Mon-Sat. 9AM - 8PM

SHERMAN OAKS

13654 Burbank Blvd., Sherman Oaks, CA 91401  
(818) 785-6529 • Mon-Sat. 9AM - 8PM